



# արմենիա

3 մայիսի 2008 շաբաթ քիվ 13

www.armedia.am



## Խմբագրական

Հերթական անգամ մեր քաղաքական ուժերը, նաև իրենց մասին հիշեցնել ցանկացող որոշ անհատներ, սկսեցին «խոր» քննարկումներ Ղարաբաղյան հակամարտության կարգավորման ուղիների շուրջ: Ո՞րն է պատճառը, կամ գուցե առի՞թն՝ այս անգամ:

Անուղղակիորեն Օսկանյանը մեղադրվեց ոչ նախաձեռնողական դիվանագիտության եւ արտաքին քաղաքականության համար: Մեղադրողները նորից «մոռացան», որ արտաքին քաղաքականության պատասխանատուն այս երկրում Հանրապետության Նախագահն է: Հետեւաբար, կամ Օսկանյանը չպետք է մեղադրվեր (մեղադրանքն այլ հասցեատեր պետք է ունենար), կամ պետք է մեղադրվեր Նախագահի որդեգրած ուղին կյանքի չկոչելու եւ հրահանգները չկատարելու համար: Այս դեպքում էլ հարց է առաջանում՝ ինչո՞ւ ՀՀ երկրորդ Նախագահը պաշտոնանկ չարեց «չենթարկվող» նախարարին:

Իսկ իրականում, բացի խոսքերից կամ տեղ-տեղ հիշողության կորուստ պարունակող դիրքորոշումներից, կարելի՞ է արդյոք այսօր տեսնել նախաձեռնող արտաքին քաղաքականության դրսեւորում: Օբյեկտիվ կլինե՞ր, եթե պատասխանեինք՝ «դեռ շուտ է»: Բայց նույնքան օբյեկտիվ է, երբ անհանգստանում ենք, որ իմիտացիան կարող է կուլ տալ իրականությունն ու արդյունքում՝ ձեռագիր դարձած անգործությունը կարող է տարածվել նաև ազգային եւ պետական անվտանգության հիմնախնդիրների վրա: Անհանգստանալու պատճառները քիչ չեն: Սկսած նրանից, որ Ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ ԱԺ հայտարարությունը չի պարունակում որեւէ կոնկրետություն, իսկ տեսական դրույթների առումով գրեթե կրկնում է 2005թ.-ին ԱԺ Արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի կազմակերպած խորհրդարանական լսումների արդյունք հանդիսացած եզրակացության տրամաբանությունը, վերջացրած նրանով, որ Անվտանգության խորհրդի քարտուղարը, նախկինում՝ առանց որեւէ հետեւանքների, երկրի առաջին դեմքի կողմից մեղադրվել է դավաճանության (ի դեպ՝ ազգային) մեջ: Այս ամենի արդյունքում հարց է առաջանում. դեռ որքա՞ն ժամանակ է պետք, որ մեր բարձրաստիճան պաշտոնյաները հասկանան, որ բացի «լավ տղա» լինելուց, իրենք երկիր են ներկայացնում, եւ հետեւաբար՝ պիտի պատասխանատու լինեն իրենց յուրաքանչյուր բառի եւ գործողության համար: Որքա՞ն ժամանակ է պետք, որ ձեւավորվի քաղաքական վերնախավ կոչվածը, եւ ազգային անվտանգության խնդիրների շուրջ ունենա քաղաքական կոնսենսուս: Նման կոնսենսուսի առկայությունը կարող էր ապահովել ԼՂՀ ճանաչման նպատակահարմարության մասին ընդհանրական մոտեցում, եւ այդ դեպքում՝ «ժառանգության» ներկայացրած համապատասխան օրինագծի քննարկումը չէր վերածվի արտաքին: Քաղաքական դաշտի նկատմամբ անվտանգությունն արդեն իսկ դառնում է անվտանգության խնդիր: Այս ամենին գումարած՝ անցած ընտրություններն ու երկու հիմնական բեւեռների կողմից կիրառված «ամեն գնով» բանաձեւը դառնում են իրական եւ շատ լուրջ մարտահրավեր: Այսօր կան գործիչներ, ովքեր փորձում են ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի եւ Տեր-Պետրոսյանի երկխոսության միջնորդը լինել: Գուցե կխոսեն, գուցե կշփվեն: Արդյունքում՝ կլինեն մարդիկ, ովքեր խոսելու մեջ դավաճանություն կտեսնեն, կլինեն այնպիսիները, որ նույնը կտեսնեն չխոսելու մեջ: Բայց իրականում, կարելուհանդեպ երկու դրույթներ լիարժեք եւ անդառնալի արժեւորման կարիք ունեն.

-ժողովրդավարության կայացումն ու ամրապնդումը արդեն իսկ ազգային եւ պետական անվտանգության խնդիր է,

-«ամեն գնով» իշխանափոխության գնացողները «զնի» մեջ գիտակցված կամ կիսագիտակցված ձեւով տեղավորում են արտաքին դերակատարների շահերը՝ չզգալով, որ այդ ընթացքում նրանց շահերը ծածկում են «զնի» ամբողջ ծավալը:

Այս շաբաթ ՀՀ ԱԺ Արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովը քննարկեց եւ մերժեց «ԼՂՀ ճանաչելու մասին» «ժառանգություն» խմբակցության օրենսդրական նախաձեռնությունը դրական եզրակացությամբ ԱԺ լիագումար միտում ներկայացնելու հարցը: Մեկ օր անց ընդունվեց ԼՂ հիմնախնդրի կարգավորման վերաբերյալ ԱԺ հայտարարությունը: Խորհրդարանը հավանություն տվեց կառավարության

### ԾՐԱԳԻՐԸ ԸՆԴՈՒՆՎԵՑ, ՆԱԽԱԶԵՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺՎԵՑ




Ծրագրին: Բացի այդ, խորհրդարանական երկու ուժերի՝ կոալիցիոն ԲՀԿ-ի եւ ընդդիմադիր

«ժառանգության» ղեկավարները հանդես եկան իշխանությունների եւ ընդդիմության միջեւ միջնորդ հանդիսանալու պատրաստակամությամբ: Այսօր վերոնշյալ իրադարձություններին անդրադառնում ենք լուրի ձեւաչափում, սակայն դրանք լինելու են մեր ուշադրության կենտրոնում եւ հետագա համարներում փորձելու ենք առավել հանգամանակից ներկայացնել սրանցից յուրաքանչյուրը: \_\_\_\_\_ 2



### ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆ

Արտաքին աշխարհը եւ մեր շուրջը կատարվող իրադարձությունները մշտապես եղել եւ մնում են «Արմենիայի» ուշադրության կենտրոնում: Նախորդ համարներից մեկում ներկայացրեցինք «Իրան. Հատուկ թողարկում» տեղեկատվական նյութը: Ստացված արձագանքներից հասկացանք, որ հարեւան երկրներն առավել հետաքրքիր են մեր ընթերցողներին: Այս շաբաթ մեր արտաքին քաղաքական էջն ամբողջովին նվիրված է մեր տարածաշրջանին: \_\_\_\_\_ 4-5



### ԵՐԲ ԵՐԿԻՐԸ ՊՏՏՎՈՒՄ ԵՐ ՀԱՎԱՈՒԿ ՈՒՂՈՒԹՅԱՄԲ

Ամերիկացի աստղագետները պարզել են, որ մինչեւ Լուսնի ի հայտ գալը, Երկրագունդը պտտվում էր ավելի արագ եւ հակառակ ուղղությամբ: Շուրջ 4.5 միլիարդ տարի առաջ տեղի է ունեցել մի իրադարձություն, որն անճանաչելիորեն փոխել է մեր մոլորակը՝ ստեղծելով կյանքի համար նպաստավոր պայմաններ. Երկրին բախվել է Մարս մոլորակի ծավալի երկնային մի մարմին, ինչի հետեւանքով տիեզերքում կուտակված ապարներից ծնվել է Լուսինը: \_\_\_\_\_ 8

Այս շաբաթ 33 Աժ Արսաֆին հարաբերությունների մշակման հանձնաժողովը ֆնանկեց եւ մեծեց «ԼՂՀ ճանաչելու մասին» «ժառանգություն» խմբակցության օրենսդրական նախաձեռնությունը դրական եզրակացությամբ Աժ լիազուրու միջոցով ներկայացնելու հարցը: Մեկ օր անց ընդունվեց ԼՂ հիմնախնդրի կարգավորման վերաբերյալ Աժ հայաստանի կողմից: Խորհրդարանը հավանություն սվեց կառավարության ծրագրին: Բացի այդ, խորհրդարանական երկու ուժերի՝ կոալիցիոն ԲՀԿ-ի եւ ընդդիմադիր «ժառանգության» ղեկավարները հանդես եկան իշխանությունների եւ ընդդիմության միջեւ միջնորդ հանդիսանալու դաշնակցականության մասին: Այսօր վերոնշյալ իրադարձություններին անդրադառնում ենք լուրի ձեւաչափում, սակայն դրանք լինելու են մեր ուշադրության կենտրոնում եւ հետագա համարներում փորձելու ենք առավել հանգամանալից ներկայացնել սրանցից յուրաքանչյուրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ԼԵՌՆԱՅԻՆ ԴԱՐԱՔԱՂԻ ՀԻՄՆԱԽՆԴԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Արտահայտելով իր անհանգստությունը Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման առնչվող վերջին շրջանի զարգացումների վերաբերյալ, Խաղաղ, բանակցությունների միջոցով կարգավորումը համարելով հակամարտության կողմերի ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակում միակ ընդունելի ուղին,

կարգավորման քննարկումներն այլ կազմակերպություններ տեղափոխելու վերաբերյալ սպառնալիքների ուղեկցությամբ, Վտանգավոր համարելով Մինսկի խմբի շրջանակներում խնդրի կարգավորման սկզբունքների հատվածական հրապարակումները՝ որպես տարատեսակ շահարկումների հնարավորություն,

ցառումների մշակման եւ իրականացման ջանքերը՝ այդ նպատակով ներգրավելով համահայկական ներուժը, հնարավորություններն ու միջոցները.

միջազգային իրավունքի շրջանակներում մշակել այն իրավական հիմքերը, որոնք կապահովեն առավել արդյունավետ համագործակցություն Հայաստանի Հանրապետության եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջեւ, ինչպես նաեւ Ադրբեջանի կողմից ռազմական ագրեսիայի կամ այլ բռնի միջոցների կիրառման դեպքում Հայաստանի Հանրապետությանը՝ որպես Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անվտանգության երաշխավորի, հնարավորություն կտան ապահովելու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության լիարժեք անվտանգությունն ու պաշտպանությունը.



Անսակարկելի եւ միջազգային իրավունքի սահմաններում անթերի համարելով Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքը, դրա իրացումը եւ այդ սկզբունքի անվերապահ կիրառման անհրաժեշտությունը խնդրի կարգավորման ժամանակ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության Նախագահին եւ կառավարությանն առաջարկում է՝

Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորմանն ուղղված հայաստանյան քաղաքականությանը հաղորդել ավելի նախաձեռնողական բնույթ.

ակտիվացնել եւ ընդլայնել Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի վերաբերյալ միջազգային հանրությանը լիարժեք տեղեկացնելուն ուղղված միջո-

ցառումների մշակման եւ իրականացման ջանքերը՝ այդ նպատակով ներգրավելով համահայկական ներուժը, հնարավորություններն ու միջոցները.

միջազգային իրավունքի շրջանակներում մշակել այն իրավական հիմքերը, որոնք կապահովեն առավել արդյունավետ համագործակցություն Հայաստանի Հանրապետության եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջեւ, ինչպես նաեւ Ադրբեջանի կողմից ռազմական ագրեսիայի կամ այլ բռնի միջոցների կիրառման դեպքում Հայաստանի Հանրապետությանը՝ որպես Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անվտանգության երաշխավորի, հնարավորություն կտան ապահովելու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության լիարժեք անվտանգությունն ու պաշտպանությունը.

33 Աժ հասարակայնության հետ կապերի վարչություն

Հայաստանի Հանրապետության Նախագահին եւ կառավարությանն առաջարկում է՝

Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորմանն ուղղված հայաստանյան քաղաքականությանը հաղորդել ավելի նախաձեռնողական բնույթ.

ակտիվացնել եւ ընդլայնել Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի վերաբերյալ միջազգային հանրությանը լիարժեք տեղեկացնելուն ուղղված միջո-



«Բարգավաճ Հայաստան» կուսակցության նախագահ Գագիկ Ծառուկյանը չի բացառում

ՄԻՋՆՈՐԴ

իր միջնորդությունն իշխանությունների հետ ընդդիմության քաղաքական երկխոսության կայացման հարցում:

«Իհարկե, կարող եմ միջնորդել, ես միշտ էլ ասել եմ, որ այս խնդրի լուծումը երկխոսությունն է, բանակցությունն է: Երկխոսությամբ, պետք է նստեն, պայմանավորվեն երկրի առջեւ ծառայած խնդիրների շուրջ, որովհետեւ բոլորն էլ հայ են», -նշել է «Բարգավաճ Հայաստան» կուսակցության նախագահը:


ԵՎ ՆՈՐԻՑ... ՄԻՋՆՈՐԴ

Խորհրդարանում ներկայացված միակ ընդդիմադիր ուժի՝ «ժառանգություն» կուսակցության նախագահ Բաֆֆի Գոլի հանդիսյանը շարունակելու է ջանքեր գործադրել իշխանությունների եւ ընդդիմության միջեւ երկխոսությանը միջնորդելու ուղղությամբ:

դիմության դերակատարության մեծացման անհրաժեշտությունը:

«ժառանգություն» խմբակցության ղեկավարի համոզմամբ, ընդդիմությունը խորհրդարանում պետք է պատասխանատվություն կրի մեծամասնություն հետ. Ազգային ժողովում «պատասխանատվության վերաբաշխում պետք է կատարվի»:

«Թե Ազգային ժողովի օրակարգի երաշխավորված սահմանման առումով, թե հանձնաժողովների դեկլարության մեջ պատասխանատու պաշտոնների ստանձնման առումով, ես որոշման կայացման այլ մեխանիզմներն իրականացնելու տեսակետից,



ընդդիմությունը պետք է ունենա էական մասնակցություն Ազգային ժողովի ներսում», -ասել է Բաֆֆի Գոլի հանդիսյանը՝ նշելով, որ խոսքը իրենց պաշտոնառաջարկելու եւ այդ առաջարկը ընդունել-չընդունելու մասին չէ:

«Մենք առաջարկելու ենք համալիր գործողությունների, ծրագրի: Անհրաժեշտ է, որ մենք գտնենք այդ ներքին բանաձեւը, որպեսզի այդ պատասխանատվության ստանձնումը լինի ոչ թե մի պաշտոնի միջոցով, այլ բովանդակային եւ վերաբերի ամբողջ ընդդիմությանը՝ թե այսօր, թե վաղը»:

Սոնա Մարտիրոսյան

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ

Հայաստանի խորհրդարանը 188 կողմ, 3 դեմ ձայների հարաբերակցությամբ հավանություն տվեց նորակազմ կառավարության ծրագրին:

«Շնորհավորում ենք կառավարությանը ծրագրի ընդունման հետ կապված, եւ Ազգային ժողովը պատրաստ է լիարժեք աջակցելու կառավարությանը այս կարգի ծրագիրը՝ «այդ» ասելով ներկայացված ծրագրին՝ կոչ է անում իր կոալիցիոն գործընկերներին զերծ մնալ կուսակցամոլությունից», -ասել է պատգամավոր Արտակ Դավթյանը:

ցելու կառավարությանը այս կարգի ծրագիրը՝ «այդ» ասելով ներկայացված ծրագրին՝ կոչ է անում իր կոալիցիոն գործընկերներին զերծ մնալ կուսակցամոլությունից», -ասել է պատգամավոր Արտակ Դավթյանը:

«Օրինաց երկիր»-ի փոխնախագահ Զեդինե Բիշարյանը բարեփոխումների համար «լուրջ հիմք» է համարել կառավարության գործունեության ծրագիրը: Իսկ Դաշնակցության խորհրդարանական խմբակցության ղեկավար Զրայր Կարապետյանը հայտարարել է, որ կոալիցիան «ունի այնքան քաղաքական կամք, որ կկարողանա իրականացնել ծրագիրը»:

Վարչապետ Տիգրան Սարգսյանն օրենսդիրներին հավաստիացրել է, որ կառավարության խոսքերի եւ գործերի մեջ եւ տարբերություն չի լինելու:

Advertisement for the National Assembly of Armenia. It includes the text 'ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ' and the phone number '080-080-804'. It also mentions 'ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ' and 'ՍՄԱՆԱԽՈՒՄ'.

# ԱՆՇՐԱԺԵՑ Ե ԱՐԴՅՈՔ ՃԱՆԱԶԵԼ ԼՂԷ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ Աժ Արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովը ապրիլի 28-ին ձայների 1 կողմ, 6 դեմ հարաբերակցությամբ մերժեց «Լեռնային Ղարաբաղի Յանրապետությունը ճանաչելու մասին» «Ժառանգություն» խմբակցության օրենսդրական նախաձեռնությունը դրական եզրակացությամբ Աժ լիագումար նիստում ներկայացնելու հարցը: Պատճառաբանությունները բազմաթիվ էին, սակայն հիմնական մտավախությունը ճանաչման հետևանքով դարաբաղյան խնդրի կարգավորումը Մինսկի խմբի ձեռնարկից դուրս բերելու հնարավորությունն էր, ինչին այդքան հետևողականորեն փորձում է հասնել Ադրբեյջանը: Մյուս կողմից՝ հանձնաժողովի ներկայացուցիչների մեծ մասը կասկածով է մոտենում վերջերս մեր երկրի համար ստեղծված իրավիճակում նման օրինագծի ընդունման նպատակահարմարությանը:

Մինչդեռ օրինագծի հեղինակ, ՀՀ Աժ «Ժառանգություն» խմբակցության ղեկավար Ռաֆֆի Յուսիպյանի համոզմամբ, վաղուց արդեն ժամանակ է մույն Մինսկի խմբի հովանու ներքո բանակցային գործընթացի տեմպը փոխել:



Պատգամավորի խոսքերով՝ բանակցային գործընթացի բոլոր փուլերում Հայաստանի մոտեցումն անենականությունն է եղել: Մինչդեռ հայկական դիվանագիտությունը հերթական հարվածը ստացավ Նյու Յորքում ՄԱԿ-ի Գլխավոր Վեհաժողովի 62-րդ նստաշրջանում մարտի 14-ի բանաձեռի ընդունմամբ, որն ամրագրում է Լեռնային Ղարաբաղի նախկին կարգավիճակը (լայն ինքնավարություն Ադրբեյջանի կազմում): Այս լույսի ներքո առավել կարեւորվում է ԼՂԷ ճանաչման օրինագծի ընդունումը, որը բխում է Հայաստանի պետական շահից եւ անվտանգության պահանջներից:

«Պետք է ԼՂԷ «de facto» կարգավիճակը ձեւակերպել «de jure», ինչը կարելի է նաեւ անվտանգության առումով, քանի որ բյուրեքից համապատասխան հատկացումների հնարավորություն կտա», - նշել է Ռաֆֆի Յուսիպյանը:

Բանավեճի առարկա էր նաեւ այն հարցը, թե ինչ սահմաններով է անհրաժեշտ ճանաչել ԼՂԷ-ն: Օրինագծի հեղինակի խոսքով՝ ԼՂԷ-ն արդեն հռչակել է իր անկախությունը եւ դիմել միջազգային հանրությանը՝ ճանաչում ստանալու համար, ուստի հարկ է հանրապետությունը ճանաչել այն տարածքով, որով այն հռչակվել է: Իսկ եթե այդ երկիրը հետագայում ձգտել իր սահմանները եԱՀԿ Մինսկի խմ-

բի շրջանակում Ադրբեյջանի հետ բանակցությունների միջոցով, պետք է ընդունել պետության այդ իրավունքը:

Ի պատասխան ՀՀԿ խմբակցության պատգամավոր Վլադիմիր Բաղալյանի այն հարցի, թե ի՞նչ արդյունք կունենա մեր երկրի կողմից ԼՂԷ ճանաչումը, եւ արդյո՞ք ճանաչումը նախադեպային կդառնա՝ «Ժառանգության» առաջնորդը նշեց, թե երաշխիքներ, որ Հայաստանի կողմից ճանաչվելուց հետո ԼՂԷ-ն կճանաչեն նաեւ այլ պետություններ, չկան, սակայն այդ փաստը առավել նպաստավոր կդարձնի հայկական կողմի դիրքը բանակցային գործընթացում:

«Այժմ, երբ դիմում ենք որեւէ երկրի ԼՂԷ ճանաչելու կոչով, նրանք պատասխանում են. «Իսկ դուք ճանաչե՞լ եք»», - նշում է Ռաֆֆի Յուսիպյանը:

Անդրադառնալով Յուսիպյանի Կիպրոսի օրինակին, որի ճանաչումը թուրքերի կողմից որեւէ դրական արդյունք չունեցավ, «Ժառանգություն» ղեկավարը նշեց, որ գոյություն ունի նաեւ Կոսովոյի նախադեպը, եւ որքան էլ միջազգային հանրությունը մշի, թե դա բացառիկ դեպք է եւ նախադեպային չի կարող համարվել, այնուամենայնիվ Ադրբեյջանում եւս մտավախություն կա, որ ԼՂԷ իրադրությունը նույն կերպ կարող է զարգանալ: Այդ մասին է վկայում Կոսովոյից ադրբեյջանական զորակազմի դուրսբերումը:

Այնուամենայնիվ, Հայաստանի կողմից ԼՂԷ ճանաչման բացասական հետեւանքներն առավել շատ կլինեն, քան դրական արդյունքները, կարծում է Արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի ներկայացուցիչների մեծ մասը:

Հանձնաժողովի նախագահ Արմեն Ռուստամյանի կարծիքով՝ ԼՂԷ-ի հռչակումից 17 տարի անց նրա ճանաչումը թյուրիմացություն կարող է առաջացնել բանակցային գործընթացում: Բացի այդ՝ հանձնաժողովի նախագահի կարծիքով, 1989թ.-ին Հայաստանն արդեն ճանաչել է Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքն ու նրա ձեւավորած իշխանությունը: Հայաստանը ԼՂԷ-ի կրկնակի ճանաչման խնդիր չի դրել 1991-ին, երբ ԽՍՀՄ փլուզման հետեւանքով տարածաշրջանում առաջացել են իրավահավասար եւ ինքնավար սուբյեկտներ՝ Ադրբեյջանն ու ԼՂԷ-ն:

Մյուս կողմից՝ Արմեն Ռուստամյանը վստահություն հայտնեց, որ խորհրդարանական մեծամասնությունն այժմ նպատակահարմար չի համարում ԼՂԷ ճանաչումը: Փոխարենը հանձնաժողովի նախագահն առաջարկել է ԼՂԷ ճանաչման հարցը քննարկել այդ երկրի, Հայաստանի արտգործնախարարության, Ազգային ժողովի ներկայացուցիչների ձեւաչափով, որից հետո միայն համապատասխան օրինագիծ քննարկել խորհրդարանում: Միաժամանակ, Արմեն Ռուստամյանի կարծիքով, անհրաժեշտ է Անվտանգության ռազմավարական համաձայնագիր ստորագրել Հայաստանի եւ ԼՂԷ միջեւ, որով մեր երկիրը Արցախի անվտանգության պահովման երաշխավոր կհռչակվի:

Աննա Սկրջյան

# Աժ ԸՆՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ

Խորհրդարանն ապրիլի 29-ին ընդունել է «ԼՂ խնդրի կարգավորման վերաբերյալ ՀՀ Աժ հայտարարություն» (տես՝ էջ 2): Աժ նախագահ Տիգրան Թորոսյանի կողմից քննարկման ներկայացված փաստաթուղթն ստացել է խորհրդարանականներից 96-ի հավանությունը, «դեմ» է քվեարկել «Ժառանգություն» խմբակցության 3 պատգամավոր, մյուսները քվեարկությանը չեն մասնակցել:



Փաստաթղթի հեղինակ Տիգրան Թորոսյանի խոսքերով՝ հայտարարության ընդունման համար պատճառ է դարձել այն փաստը, որ ԼՂ կարգավորման շուրջ գործընթացները լավատեսություն չեն ներշնչում:

«Վերջերս առավել հաճախակի են դարձել Ադրբեյջանի ռազմատենչ հայտարարությունները, որտեղ հայերի ու Հայաստանի նկատմամբ ատելություն է քարոզվում», - փաստել է Աժ նախագահը:

Միաժամանակ, փաստաթղթին դեմ արտահայտված «Ժառանգություն» խմբակցության ներկայացուցիչ Լարիսա Ավարդյանի խոսքերով, հայտարարությունը ԼՂ հարցի կարգավորման որեւէ հիմնադրույթ եւ սկզբունք չի սահմանում եւ լոկ իրավիճակային բնույթ է կրում: Պատգամավորը մտահոգություն է հայտնել, թե փաստաթուղթը նախաձեռնականության ու երկչոտության օրինակ է:

«Ժառանգություն» խմբակցության մյուս ներկայացուցիչ Ջարուհի Փոստանջյանը կասկածի տակ է դրել փաստաթղթի ընդունման իրավաչափությունը: «Եթե Հայաստանը չի ճանաչում ԼՂԷ անկախությունը,

նր, ապա ինչպե՞ս կարող են իրավական հիմքերով միմյանց հետ հարաբերություններ լինել: Պետք է օրենքով ճանաչել ԼՂԷ անկախությունը եւ դրանից բխող օրենքներով կարգավորել բազմակողմ հարաբերությունները», - նշել է պատգամավորը:

«ԼՂ խնդրի կարգավորման վերաբերյալ» հայտարարությանը զուգահեռ՝ ապրիլի 28-ին խորհրդարանում քննարկվել է «Լեռնային Ղարաբաղի Յանրապետության անկախությունը ճանաչելու մասին»՝ «Ժառանգության» առաջնորդ Ռաֆֆի Յուսիպյանի մշակած օրինագիծը չորրորդ գումարման Աժ-ի երրորդ նստաշրջանի օրակարգում ընդգրկելու նպատակահարմարության հարցը:

Չնայած հեղինակի հավաստիացումներին այն մասին, որ Լեռնային Ղարաբաղի Յանրապետության անկախության ճանաչումը ՀՀ օրենսդիր մարմնի կողմից կարելի է քայլ կլինի հիմնախնդրի կարգավորման օրենսդրական լուծման առումով եւ բանակցային գործընթացում եւ ԼՂԷ-ի հետ իրավական հարաբերություններում կիստակեցնի հետագա քայլերը, քվեարկության արդյունքում որոշվել է փաստաթուղթը չընդգրկել օրակարգում:

Աժ նախագահ Տիգրան Թորոսյանի խոսքերով՝ օրինագիծն օրակարգում ընդգրկելու հիմնավորումները բավարար չեն:

«Ի վերջո, կարծում են, զոնե նման հարցերում հարգալից վերաբերմունք խորհրդարանի մյուս խմբակցությունների նկատմամբ անպայման պիտի լինի: Մենք տեսանք, որ անգամ Կոսովոյի ճանաչման հետ կապված՝ չընտրվեց այն ճանաչարից, որն այժմ այստեղ առաջարկվում է: Այնպես որ, Կոսովոյի դեպքի մատնանշումը կամ ակնարկումը նույնպես որեւէ կերպ չի փոխում իրավիճակը», - հայտարարել է Տիգրան Թորոսյանը:

Մինչդեռ օրինագծի հեղինակ Ռաֆֆի Յուսիպյանի հավաստմամբ՝ առանց մեր կողմից Լեռնային Ղարաբաղի անկախության ճանաչման, ակնկալել, որ այդ կերպ կվարվի միջազգային հանրությունը, ավելորդ է:

Անահիտ Մանուկյան

# ՇԵՐԵՐԸ ԽՆԱՄՔԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՆ

«Ստանում են 16.000 դրամ թոշակ, 8.000 դրամ էլ նպաստ, դրանով կապրե՞ն, հը՞, ազիզ ջան», - հոգոց է հանում 74-ամյա տիկին Հասմիկը:

Արդեն 15 տարի է, ինչ մենակ է ապրում, ծնունդ ցրտերին մի կերպ մթնեցնում օրերը: «Սաղ ծնեռը ես հարեւանի տուն, նրա տուն, գազ էլ չունեն: Տանս մեջ ոչ մի բան չունեն. ո՛չ հեռուստացույց, ո՛չ ռադիո. մի հատ աթոռ ունեի, էն էլ մարդ էր կելել, տվեցի, նստեց, ջարդվեց: Մի տարի էր՝ օգտվում էի անվճար ճաշարանից, էն էլ փակեցին», - պատմում է տիկին Հասմիկը:

Հասմիկ տատիկն ամուսնացած չէ, երեխաներ չունի: Նրա չորս եղբայրներից մեկը մահացել է, մյուսի գտնվելու վայրի մասին տեղեկություն չունի, իսկ մյուս երկուսին այցելում է ամիսը մեկ կամ երկու անգամ:

Վերջին տարիներին աշխատել է Հրազդանի թիվ 11 դպրոցում՝ որպես հավաքար: Մեկ տարի առաջ Հասմիկ տատիկին աշխատանքից ազատեցին: Հենց այդ օրվանից նրա համար երկրորդ տուն դարձավ «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի Հրազդանի տարածքային կենտրոնը:

Այսօր Հրազդան քաղաքում գործող «Առաքելություն Հայաստան» հասարակական կազմակերպության բարեգործական ճաշարանի հոգաժողովի ներքո են գտնվում 117 միայնակներ: Բարեգործական ճաշարանը մինչեւ 2007թ. դեկտեմբերը ֆինանսավորվել է շվեդական կազմակերպության կողմից: 2008թ.-ից ֆինանսավորումը դադարեցվել է, եւ Հրազդան քաղաքի տարեցները կրկին հույսները դրել են իրենց «կատարյալ» մաթեմատիկական գիտելիքների վրա՝ անսխալ բաշխելով պետության

կողմից հատկացրած թոշակն էլեկտրաէներգիայի, ջրի, գազի, աղբի վարձավճարների եւ ամիսը զոնե մեկ անգամ շքեղություն համարվող միս գնելու համար:

«Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի Հրազդանի տարածքային կենտրոնի սոցաշխատող Շողիկ Ջաքարյանն ասում է, որ ճաշարանը վերագործարկելու համար իրենք դիմել են Հրազդանի քաղաքապետարան, բայց ոչ մի օգուտ. քաղաքապետարանը կարողացել է ֆինանսավորել միայն աշխատողների աշխատավարձերը եւ ոչ ավելին: Իսկ մշտական օգնության կարիք ունեցող միայնակ տարեցներն առայժմ ստիպված են ինքնուրույն լուծել իրենց սննդի հարցերը եւ կենտրոն այցելել պարզապես ազատ ժամանակն ինչ-որ բանով լցնելու համար:

«Տարեցներին այստեղ ցուցաբերվում է իրավատեղեկատվական աջակցություն, բուժօգնություն: Նրանց համար կան նաեւ ժամանցի սենյակներ, որտեղ այցելուները կարող են գրքեր կարդալ, նարդի, շախմատ, լոտո, դոմինո խաղալ, նաեւ հեռուստացույց դիտել: Կազմակերպվում են նաեւ հոգեբանական դասընթացներ: Փորձում ենք ինչ-որ կերպ հետաքրքիր դարձնել նրանց կյանքը: Այստեղ զվարճ են բոլոր տոները, ծննդյան օրերը», - ասում է Շողիկը:

Միայնակ, անապահով տարեցներն այսօր Հայաստանում մեծ թիվ են կազմում: Նրանց մի մասի կարիքները որեւէ կերպ թեմանսավորվել է շվեդական կազմակերպության կողմից: 2008թ.-ից ֆինանսավորումը դադարեցվել է, եւ Հրազդան քաղաքի տարեցները կրկին հույսները դրել են իրենց «կատարյալ» մաթեմատիկական գիտելիքների վրա՝ անսխալ բաշխելով պետության

Լուսինե Դալլախյան

# ԱՂՐԲԵՋԱՆ. ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԸՆԴԱՌԱՋ

Համաձայն Աղբեջանի Սահմանադրության՝ 2008թ.-ին լրանում է գործող նախագահ Իլիամ Ալիևի կառավարման ժամկետը (2003-2008), ուստի այս տարվա հոկտեմբերի 15-ին Աղբեջանում տեղի կունենան նախագահական ընտրություններ: Ինչ վերաբերում է ընտրությունների ընթացակարգին, ապա հարկ է նշել, որ թե՛ նախագահական, թե՛ խորհրդարանական ընտրություններն Աղբեջանում անցկացվել են կեղծիքներով ու ընտրողների իրավունքների խախտումներով: Այդ մասին բազմիցս հայտարարել են ԵԱՀԿ-ն, Եվրոպայի խորհուրդը (ԵԽ), եւ այլ միջազգային կառույցներ՝ արձանագրելով, որ անցկացված ընտրությունները չեն համապատասխանում միջազգային չափանիշներին, ինչպես նաեւ ԵԽ-ի առջեւ Աղբեջանի ստանձնած պարտավորություններին:

Յուրեղին մասնակցելու են իրենց թեկնածուներով. հայտնի են թեկնածուների անունները՝ Իսա Գամբար («Մուսավաթ» կուսակցություն), ով 2003թ.-ի նախագահական ընտրություններում ձայների թվով զբաղեցրել է երկրորդ տեղը, Իբրալ Աղազադե («Ումիդ»



կուսակցություն), Սարգար Ջալալօղլու («Դեմոկրատական» կուսակցություն) եւ այլն:

«Դեմոկրատական» կուսակցությունը (ԴԿ) սկզբում հայտարարում էր, որ եթե ընդդիմությունն ունենա միասնական թեկնածու, ապա իրենք կպաշտպանեն վերջինին:

Պետք է նշել, որ երկար տարիներ ԴԿ-ը կապվում էր միայն մեջլիսի նախկին նախագահ Ռասուլ Գուլիեի անվան հետ. նա համարվում էր ոչ միայն կուսակցության նախագահը, այլև գաղափարախոսը: Անժխտելի է, որ Գուլիեի նախագահության օրոք ԴԿ-ը համարվում էր Աղբեջանի խոշոր կուսակցություններից մեկը: 2007թ.-ին կուսակցության ներսում Գուլիեի (ով ապրում է ԱՄՆ-ում՝ որպես էմիգրանտ) եւ Ջալալօղլուի կողմնակիցների միջեւ սրված պայքարը հանգեցրեց նրան, որ Գուլիեի կողմնակիցներն ստեղծեցին նոր կուսակցություն՝ «Բաց հասարակություն» անունով:

Պետք է նշել, որ երկար տարիներ ԴԿ-ը կապվում էր միայն մեջլիսի նախկին նախագահ Ռասուլ Գուլիեի անվան հետ. նա համարվում էր ոչ միայն կուսակցության նախագահը, այլև գաղափարախոսը: Անժխտելի է, որ Գուլիեի նախագահության օրոք ԴԿ-ը համարվում էր Աղբեջանի խոշոր կուսակցություններից մեկը: 2007թ.-ին կուսակցության ներսում Գուլիեի (ով ապրում է ԱՄՆ-ում՝ որպես էմիգրանտ) եւ Ջալալօղլուի կողմնակիցների միջեւ սրված պայքարը հանգեցրեց նրան, որ Գուլիեի կողմնակիցներն ստեղծեցին նոր կուսակցություն՝ «Բաց հասարակություն» անունով:

ԴԿ նախագահը պնդում է, որ իրենց թեկնածուն առաջին փուլում կհավաքի ընտրողների ձայների 25%-ը: Ինչ վերաբերում է «Բաց հասարակություն» կուսակցությանը, ապա նախագահական ընտրություններին մասնակցելու հարցում վերջնականապես կկողմնորոշվի այն դեպքում, երբ պարզ կդառնա Գուլիեի՝ Աղբեջան վերադառնալու հնարավորությունը:

«Աղբեջանի սոցիալ-դեմոկրատական կուսակցություն» էլ դեռ վերջնականապես չի որոշել, թե ում կպաշտպանի, սակայն կուսակցության համանախագահ Ալի Ջադեի խոսքերով՝ կուսակցությունն առաջին հերթին կպաշտպանի առաջին նախագահ Այազ Մութալիբովի թեկնածությունը, եթե, իհարկե, իշխանությունները հնարավորություն տան վերջինին գրանցվել՝ որպես թեկնածու: Այսպիսով՝ 2008թ.-ի նախագահական ընտրություններին մասնակցելու հարցում ընդդիմադիր քաղաքական դաշտը բաժանվել է երկու ճամբարի՝ ընտրություններին մասնակցելու կողմնակիցների եւ բոյկոտողների:

Պետք է ասել, որ այս երեւույթը նորություն չէ Աղբեջանի քաղաքական կյանքում. ընդդիմությունը բազմիցս բոյկոտել է մի շարք ընտրություններ, այդ թվում՝ 1998թ.-ի նախագահական ընտրությունները՝ պահանջելով փոփոխել ընտրական օրենսգրքը, իսկ ընտրական հանձնաժողովը ձեւավորել իրավահավասարության հիմքի վրա: Այսօր էլ սա արդիական պահանջ է ընդդիմության համար:

Բոյկոտողների մեջ հիմնականում «Ազադըզ» (Ազատություն) դաշինքի մեջ մտած կուսակցություններն են, որոնք են «Լիբերալ», «Քաղաքացիական առաջընթաց» եւ «Ժողովրդական ճակատ» կուսակցությունները, ինչպես նաեւ բոյկոտելու հավանականությունը չի բացառում «Բաց հասարակություն» կուսակցությունը: «Ժողովրդական ճակատ» կուսակցությունը հայտարարել է, որ «Ազադըզ» ընդունակ է ընտրությունների բոյկոտի հարցում գրավելու ընտրողների 80%-ի ուշադրությունը:

Ընտրությունները չեն պատրաստվում բոյկոտել «Աղբեջանի ազգային անկախություն կուսակցությունը» եւ «Քաղաքացիական համերաշխություն կուսակցությունը»: Զբոյկոտողների թվին են պատկանում նաեւ «Ադալաթ», «Լիբերալ-դեմոկրատական», «Ումիդ», «Անա վաթան», «Կոմունիստական», «Դեմոկրատական» եւ այլ կուսակցություններ:

Աղբեջանական մամուլում տեղ գտած վերլուծությունների համաձայն՝ կուսակցությունները, որոնք գնալու են բոյկոտի, պատճառաբանում են, որ՝ առաջին՝ ձայների արդար հաշվարկ հնարավոր չէ նման ընտրական հանձնաժողովի պայմաններում, որի մեջ մտած են միայն իշխող «Ենի Ազերբայջան» կուսակցության անդամներ, երկրորդ՝ ընտրություններում ընդդիմության մասնակցությունը հնարավորություն կտա իշխանություններին բարձրաձայնել ընտրությունների ժողովրդավարական բնույթը:

Կուսակցությունները, որոնք կողմ են ընտրություններին մասնակցելուն, գտնում են, որ՝ առաջին՝ բոյկոտի դեպքում իշխանությունների ձեռքում կլինեն ընտրակեղծիքներ անելու բոլոր խաղաքարտերը, երկրորդ՝ մասնակցության դեպքում ընդդիմադիր կողմը հնարավորություն կունենա հետեւելու եւ վերահսկելու ձայների հաշվարկի ընթացքը: Այսպիսով՝ նախագահական ընտրությունների հարցում Աղբեջանում դեռեւս ընթանում են քաղաքական խնդիրներ: Թե մի շարք ընդդիմադիր կուսակցություններ թեկնածուների հարցում արդեն որոշումներ կայացրել են, այնուամենայնիվ, կան ազդեցիկ ուժեր, որոնք դեռ նոր են առաջադրելու կամ պաշտպանելու իրենց թեկնածուներին, ինչն էլ ընդդիմադիր դաշտում կարող է փոփոխություններ մտցնել:

Պետք է ասել, որ այս երեւույթը նորություն չէ Աղբեջանի քաղաքական կյանքում. ընդդիմությունը բազմիցս բոյկոտել է մի շարք ընտրություններ, այդ թվում՝ 1998թ.-ի նախագահական ընտրությունները՝ պահանջելով փոփոխել ընտրական օրենսգրքը, իսկ ընտրական հանձնաժողովը ձեւավորել իրավահավասարության հիմքի վրա: Այսօր էլ սա արդիական պահանջ է ընդդիմության համար:

Այսպիսով՝ Աղբեջանն այս տարի նախագահական ընտրությունների նախաշեմին է, եւ որոշ ընդդիմադիր եւ իշխանամետ կուսակցություններ արդեն հայտնել են 2008թ. նախագահական ընտրությունների նախապատրաստական աշխատանքների մասին, հայտնի են նաեւ թեկնածուների անունները: Իշխող «Ենի Ազերբայջան» (Նոր Աղբեջան) կուսակցությունը դեռ անցյալ տարվանից է նախապատրաստվել առաջիկա ընտրություններին:

Հիշեցնենք, որ 1993թ.-ից «Ենի Ազերբայջան» կուսակցությունը, նախագահ Յեյդար Ալիևի ղեկավարությամբ, եկավ իշխանության: 2003թ.-ի նախագահական ընտրություններում եւ «Ենի Ազերբայջան» կուսակցությունը հաղթանակ տարավ. այս անգամ նախագահի աթոռը զբաղեցրեց Իլիամ Ալիևը:

«Ենի Ազերբայջան» կուսակցության գաղափարական ուղղվածությունը լիբերալ-դեմոկրատական է. համենայն դեպս, պաշտոնապես այդպես է ներկայացվում: 2008թ.-ի նախագահական ընտրություններում «Ենի Ազերբայջան» կուսակցությունն առաջադրելու է Իլիամ Ալիևի թեկնածությունը, եւ կարելի է ասել՝ կօգտագործի պետական բոլոր լծակներն Ալիևի վերընտրվելու գործում:

Գործող նախագահի օգտին է քվեարկելու նաեւ իշխանամետ «Անա վաթան» (Մայր Հայրենիք) կուսակցությունը:

Ինչ վերաբերում է ընդդիմադիր ուժերին, ապա նախ պետք է նշել, որ դեռեւս Յեյդար Ալիևի որդեգրած՝ ընդդիմության վրա ճնշում գործադրելու քաղաքականությունն այսօր էլ շարունակվում է: Չնայած դրան՝ ընդդիմադիր քաղաքական ուժերը պատրաստվում են հոկտեմբերին տեղի ունենալիք նախագահական ընտրություններին: Մի շարք կուսակցություններ նախագահական ընտրու-

# ԻՐԱՆ. «ԱՄՈՒՐ ԸՆԿՈՒՅՋ»

Դեռ երկու ամիս առաջ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը հաստատեց ընդդեմ Իրանի 1803 բանաձեւն այն բանից հետո, երբ Իրանը կրկին հրաժարվեց դադարեցնել ուրանի հարստացման աշխատանքները: Նախագիծը ներկայացրել էին Ֆրանսիան եւ Մեծ Բրիտանիան, եւ այն հաստատվել էր ձայների 14 կողմ, 1 ձեռնպահ հարաբերակցությամբ:

Իրանի միջուկային ծրագրերը շարունակում են անհանգստացնել միջազգային համայնությունը՝ հատկապես ԱՄՆ-ին: Այսպես՝ Պարսից ծոցի երկրները որպես Իրանին հակադիր ուժ օգտագործելու քաղաքականությունը դեռ վաղուց ԱՄՆ-ի ռազմավարության մի մասն է կազմում:

Սպիտակ տունը ձգտում է ամրապնդել Պարսից ծոցի երկրների ռազմական պոտենցիալը, ուստի Սաուդյան Արաբիան եւ ծոցի մյուս երկրները 20 մլրդ դոլարի զինամթերք են ստացել: ԱՄՆ-ի պետքարտուղարի տեղակալ Նիկոլաս Բեռնասի խոսքերով՝ զինամթերքի մատակարարումը թույլ կտա այդ երկրներին սահմանափակել Իրանի հետագա առաջխաղացումն ու ազդեցիկությունը:

Չնայած Բուշի վարչակարգի գործադրած ջանքերին՝ Պարսից ծոցի երկրների շրջանակներում Իրանի հարցում միակարծություն եւ միահամուռ դիմադրություն չի նկատվում: Ի տարբերություն Բահրեյնի, Քուվեյթի եւ Սաուդյան Արաբիայի, որոնք քննադատում են Իրանի զավթողական քաղաքականությունը, վախենալով վերջինի միջամտությունից իրենց ներքին գործերին, Կատարն ու Արաբական Միացյալ Էմիրությունները դեռ 1990-ական թվականներից սերտ տնտեսական համագործակցության մեջ են Թեհրանի հետ եւ չեն պատրաստվում հակամարտության մեջ մտնել, քանի որ խոշոր առեւտրատնտեսական պայմանագրեր ունեն այդ երկրի հետ:

Վերջերս ԱՄՆ-ն ու Մեծ Բրիտանիան հերթական անգամ հաստատեցին իրենց պատրաստակամությունը՝ ընդդեմ Իրանի միջուկային ծրագրերի: Վաշինգտոնն ու Լոնդոնը պլանավորում են Իրանի դեմ նոր պատժամիջոցներ կիրառել: Բուշը Բրիտանիայի վարչապետ Բլաունի հետ համատեղ մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարել է, որ իրենք համագործակցելու են նաեւ մյուս երկրների հետ եւ թույլ չեն տալու իրանական վարչակարգին միջուկային զենք ունենալ, իսկ ԱՄՆ-ն աշխատանքներն իրականացնում է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի շրջանակներում:

Հիշեցնենք, որ ՄԱԿ-ի 1803 բանաձեւն արգելում է մուտքի վիզա տալ Իրանի միջուկային ծրագրերում ընդգրկված որոշ բարձրաստիճան պաշտոնյաներին եւ պահանջում է սառեցնել մի շարք մասնավոր անձանց եւ իրանական ընկերու-

թյունների գործունեությունը: Բանաձեւը ՄԱԿ-ի անդամ երկրներին թույլ է տալիս կասկածելու դեպքում ստուգել օդային եւ ջրային ճանապարհներով Իրան ներմուծվող եւ Իրանից արտահանվող բեռները եւ այլն:

Այսօր, երբ միջուկային զենքի տարածման սպառնալիքներն անխուսափելի են, փորձագետները գտնում են, որ ԱՄՆ-ը պետք է Իրանի հետ բանակցությունների գնա այնպիսի հարցերի շուրջ, որոնք կարտացոլեն Թեհրանի շահերը եւ կստիպեն նրան գնալ Արեւմուտքի հետ համագործակցության:

Ընդհանուր հետաքրքրությունների շարքում կարող են լինել Պարսից ծոցի անվտանգության հարցը, Իրանում Իրանի ազդեցության գործոնը եւ այլն:

Նշենք, որ ԱՄՆ-ի եւ Իրանի միջեւ բանակցություններ ընթացել են Իրանում կայունություն հաստատելու խնդիրների շուրջ, պայմանավորվածություններ են ձեռք բերվել հետագա հանդիպումների համար, սակայն քաղաքական հետագա զարգացումները մի շարք խոչընդոտներ են առաջացրել գործընթացում:

2008թ. ապրիլի 7-ին Իրանն ԱՄՆ-ի կողմից նոր բանակցությունների պաշտոնական գրություն է ստացել, որն ըստ պաշտոնական Թեհրանի դեռեւս ուսումնասիրում է:

Հիշեցնենք, որ դեռեւս փետրվարի 15-ին, ապա մարտի 6-ին նախատեսված ԱՄՆ-Իրան-Իրաք եռակողմ բանակցությունները չէղյալ հայտարարվեցին՝ համապատասխանաբար իրանական, ապա ամերիկյան կողմերի պահանջով:

Որոշ փորձագետներ համոզված են, որ Վաշինգտոն-Թեհրան բանակցությունների հարցում առավել շահագրգիռ է Բաղդադը՝ հաշվի առնելով նրանց երկուսի ազդեցությունն այդ երկրում:

Բանակցությունների հետաձգման մեջ Վաշինգտոնն ու Թեհրանը շարունակում են փոխադարձաբար միմյանց մեղադրել:

Իրականում ամերիկա-իրանյան շահերը Իրանում գրեթե համընկնում են. դեռ Սադամ Հուսեյնի վարչակարգի տապալումը Իրանի շահերից էր բխում: Վաշինգտոնում լավ գիտակցում են, որ այսօր էլ առանց Իրանի հետ համաձայնության ու համագործակցության, անհնար է Իրանում կայունություն ապահովել:

Եթե ԱՄՆ-ն Իրանի հետ պատրաստ է բանակցելու միայն Իրաքի հարցում, ապա Իրանը շահագրգիռ է այլ հարցերի շուրջ եւս բանակցելու, ուստի ԱՄՆ-ի կողմից սակարկություններ է ակնկալում՝ միաժամանակ չդադարեցնելով ուրանի հարստացման աշխատանքները: Դրությունը թեժանում է. Պետագործը թարմացնում է Իրանի վրա հարձակման ծրագիրը:

# ՈՒՄ ԿՈՂՄԻՅ Է ՂԵԿԱՎԱՐՎՈՒՄ ԹՈՒՐԲԻԱՆ

Օրերս Թուրքիայի Ազգային Մեծ ժողովը հաստատեց 301-րդ հոդվածի փոփոխության օրինագիծը, ինչը քննարկման էր դրվել «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության առաջարկով:

Համաձայն 301-րդ հոդվածի՝ «Թուրքական ինքնությունը, հանրապետությանը եւ Թուրքիայի ազգային մեծ ժողովին հրապարակավ նվաստացնող յուրաքանչյուր ոք պատժվում է 6 ամսից մինչեւ 3 տարի ազատազրկմամբ», իսկ դրա փոփոխված տարբերակի համաձայն՝ «Թուրք ազգին, Թուրքիայի Հանրապետությանը, Թուրքիայի ազգային մեծ ժողովին, կառավարությանը եւ պետությանը իրավապահ մարմիններին հրապարակավ նսեմացնող յուրաքանչյուր ոք պատժվում է 6 ամսից մինչեւ 2 տարի ազատազրկմամբ»:

Փաստորեն, հոդվածը նախկինի պես թույլ է տալիս քրեական գործ հարուցել Թուրքիայում՝ միայն պատժի առավելագույն չափը 3-ից իջեցնելով 2 տարի ազատազրկման:

Այնուամենայնիվ, օրինագծի ընդունումը ներքաղաքական սուր պայքարում «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության չափավոր հետեւողականության արդյունք կարելի է համարել: Քանի որ մինչ այդ՝ մարտի 14-ին, Թուրքիայի Սահմանադրական դատարանը «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության չափավոր հետեւողականության արդյունք կարելի է համարել: Քանի որ մինչ այդ՝ մարտի 14-ին, Թուրքիայի Սահմանադրական դատարանը «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության չափավոր հետեւողականության արդյունք կարելի է համարել:

Այսպես, Թուրքիայի վճռաբեկ դատարանի գլխավոր դատախազ Աբդուրահման Յալչընքայան Սահմանադրական դատարանից պահանջում է 5 տարի ժամկետով արգելել իշխող կուսակցության 71 անդամների, այդ թվում՝ վարչապետ Էրդողանի ու նախագահ Աբդուլահ Գյուլի քաղաքական գործունեությունը:

Հավելենք, որ Սահմանադրական դատարանը, ինչպես նաեւ ողջ դատական համակարգը Թուրքիայում կրում են զինվորականության որոշակի ազդեցություն: Վերջինները մեղադրում են «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցությանը երկրի աշխարհիկությունը վտանգելու համար:

Այս առնչությամբ հատկանշական են վերջերս Թուրքիայում տեղի ունեցած իրադարձությունները, երբ «Հայրենիք» պայմանական անունով թուրքական անվտանգության ուժերի ահաբեկչության դեմ պայքարի վարչությունը հունվար ամսին միաժամանակյա գործողություններ իրականացրեց Թուրքիայի 7 քաղաքներում՝ Ստամբուլում, Ադանայում, Իզմիրում, Գյուլջեում, Բիլեջիքում, Մալաթիայում եւ Բուրսայում՝ ձերբակալելով

ընդհատակյա հանցագործ խմբի՝ «Էրգենեքոն» ահաբեկչական կազմակերպության երեսուցից ավելի անդամների, որոնց մեծամասնությունը նախկին զինվորականներ են, այդ թվում՝ պաշտոնաթող զեներալ Վելի Քյուչուքը: Ընդ որում, վերջինի անվան եւ ընդհանրապես վերոնշյալ ընդհատակյա կազմակերպության հետ են կապված նաեւ Հրանտ Դինքի սպանության որոշակի մեկնաբանություններ:

Ենթադրվում է, որ «Էրգենեքոն»-ի թիկունքում կանգնած են եղել թուրքական զինված ուժերը, որոնց գործողությունները տանելու էին դեպի «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության իշխանության տապալում:

Առեւտույթ թվում է, թե Թուրքիան ղեկավարվում է քաղաքական ուժի կողմից, սակայն երկրում բավական

Սակայն 2007թ.-ի նախագահական ընտրություններում հաղթանակ տարած «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցությունը՝ ի դեմս Աբդուլահ Գյուլի, կրկին շեշտեց իր իսկ առաջ քաշած՝ իսլամի ու ժողովրդավարության հավասարության գաղափարը: Սա էլ իր հերթին եկավ լրացնելու զինվորականների իշխանության սահմանափակման քաղաքականությունը:

Գյուլի հաղթանակը ցանկալի չէր զինվորականների համար, եւ նախագահական ընտրություններն ընթանում էին վերջինների եւ «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության միջեւ հակասությունների սրմամբ, ինչի հետեւանքով ընտրությունների միայն երրորդ փուլում Գյուլն ընտրվեց հանրապետության նախագահ:

Բացի այդ՝ ողջ ընտրար-



մին ազդեցիկ ուժ է ներկայացնում զինվորականությունը՝ գլխավոր շտաբը, բանակը:

Հիշեցնենք, որ Թուրքիայում մի քանի անգամ պետական հեղաշրջում է տեղի ունեցել, ինչի հետեւանքով իշխանությունն անցել է զինվորական վերնախավին:

Ահա թե ինչու Թուրքիայի պարագայում որոշ վերլուծաբաններ առաջ են քաշում «խորքային պետության» գաղափարը, որը պայքարի մեջ է քաղաքական իշխանությունների հետ իր գերակայության ամրապնդման, ապահովման համար:

Այստեղ էլ բախվում են զինվորական վերնախավի եւ այսօրվա Թուրքիայի քաղաքական ուժի՝ «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության շահերը:

Ձինվորական վերնախավը, գործի դնելով իր ենթակայության տակ եղած զինվորական ու քաղաքական կառույցները, ինչպես նաեւ «Գորշ գայլերին» եւ նրանց քաղաքական թեւ հանդիսացող «Ազգայնական շարժում» կուսակցությանը, պայքարի մեջ է մտնում «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության հետ՝ առաջին հերթին մեղադրելով քեմալիզմի դրույթները չհարգելու, չպահպանելու համար, շահարկելով կուսակցության իսլամիստական ուղղվածություն ունենալն ու պետական իշխանության աշխարհիկ բնույթը սպառնալիքի տակ դնելու հանգամանքը:

չավն ուղեկցվում էր զինվորականների կողմից հրահրված բազմահազարանոց ցույցերով: Ի հավելում սրան՝ զինվորական վերնախավը գլխավոր շտաբի պետի գլխավորությամբ չմասնակցեց Գյուլի երդման արարողությանը:

Ինչ վերաբերում է երդողանի կուսակցության իսլամիստական կողմնորոշմանը, ապա, ճիշտ է, լինելով իսլամիստական՝ միաժամանակ «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցությունը, ինչպես բազմիցս նշել են կուսակցության ղեկավար անդամները, հակված է դեպի Արեւմուտք եւ ջանք չի խնայում Եվրամիությանն անդամագրվելու գործում, ինչին վերապահումով է մտնում բանակը, այն պարզ պատճառով, որ ԵՄ չափանիշներով քաղաքական իշխանությունը պետք է կենտրոնացած լինի միայն քաղաքական ուժի ձեռքում՝ բացառելով զինվորականության միջամտությունը:

Այնուամենայնիվ, Թուրքիայի Հանրապետության պատմության ընթացքում զինված ուժերը խոր արմատներ են ունեցել եւ այսօր էլ ազդեցիկ են երկրի քաղաքական համակարգում: Թեեւ Էրդողանի կուսակցության մեկը մյուսի հետեւից տարած հաղթանակները խոստումնալից են թվում, սակայն զինվորականները դեռեւս կարող են որոշ անակնկալներ մատուցել:

Տիգրան Պետրոսյան

# ՎՐԱՍՏԱՆ. ՍՊԱՍՈՒՄՆԵՐ

Միջազգային հանրության ուշադրության կենտրոնում էր վերջերս Ռուսիայի մայրաքաղաք Բուխարեստում անցկացված Հյուսիսատլանտյան դաշինքի (ՆԱՏՕ) գագաթաժողովը: Օրակարգում, բազմաբնույթ հարցերից բացի, ներառված էր նաեւ Ուկրաինային եւ Վրաստանին ՆԱՏՕ-ին անդամակցության թեկնածուի կարգավիճակի տրամադրման հարցը:

Հատկանշական է, որ մինչ այդ Վրաստանում հանրաքվեի էր դրվել եւ ընտրողների մեծամասնության հավանությանն արժանացել ՆԱՏՕ-ին անդամակցելու հարցը:

Բուխարեստում աշխատանքներն արդեն ավարտված են, եւ Վրաստանի անդամակցության հարցը որոշվեց քննարկել դեկտեմբերին:

Ինչ վերաբերում է Վրաստանի խորհրդարանական ընտրություններին, ապա նշենք, որ ընտրությունները տեղի կունենան այս տարվա մայիսի 21-ին, իսկ վրացական ընդդիմադիր քաղաքական ուժերը հերթական «թավշյա հեղափոխության» առնվազն փորձեր խոստանում են:

Արձագանքելով ընդդիմության առաջնորդների հայտարարություններին՝ վրացական մամուլը գրում է, որ ընդդիմադիր ուժերը սպառնում են համաժողովրդական ապստամբությամբ, եթե մայիսի 21-ին կայանալիք խորհրդարանական ընտրություններում Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կրկին արձանագրի իշխանության հաղթանակը:

Սա առաջին դեպքն է, երբ ընդդիմությունն ապստամբության կամ հեղաշրջման սպառնալիքներով է հանդես գալիս: Հակառակ դրան՝ իշխանությունները, ունենալով ադմինիստրատիվ եւ քարոզչական անհրաժեշտ ռեսուրսները, ընտրություններում իրենց հաղթանակած են համարում: Նախագահ Սահակաշվիլին եւ «Ազգային շարժման» մյուս առաջնորդները համոզված են, որ վայելում են հասարակության մեծամասնության վստահությունը:

Սակայն իշխանական ժամբարում էլ ամեն ինչ հարթ չի ընթանում: Սինո Բուրջանաձեն հրաժարվեց Սահակաշվիլու ցուցակում մասնակցել խորհրդարանական ընտրություններին՝ ավելացնելով, որ իր որոշումը վերջնական է եւ անփոփոխ: Չմանրամասնելով իր հետագա անելիքները՝ Բուրջանաձեն նշել է միայն, որ ինքը չի պատրաստվում հրաժարական տալ, ոչ էլ՝ անցնել ընդդիմության շարքերը:

Այսօր ընդդիմադիր ուժերը շտապում են հայտարարել, որ չեն թաքցնում հունվարի 5-ին տեղի ունեցած նախագահական ընտրությունների վեգիտիմության հարցում իրենց մեղավորության փաստը, եւ խոստովանում են, որ հենց իրենք են կասեցրել հարյուրհազարավոր մարդկանց ընդվզումն ընդդեմ իշխանության, քանի որ հետագա քաղաքական զարգացումներն առաջին հերթին կվնասեն պետության շահերին, իսկ եթե խորհրդարանական ընտրությունները նախագահականի պես կեղծվեն, ապա ընդդիմությունն այս անգամ չի փորձի չեզոքացնել իշխանությունից դժգոհ հասարակության աղբյուրները:

Ընդդիմադիր «Դեմոկրատական ճակատ» խմբակցության առաջ-

նորդ Կախա Կուկալան հայտարարել է, որ ընտրությունների արդյունքներն իրենց համար անընդունելի լինելու դեպքում, Վրաստանում սպասվում է հեղափոխություն:

Փորձագետները համոզված չեն, որ այս անգամ եւս ընդդիմադիր ուժերը կկարողանան բազմահազար մարդկանց բողոքի ցույցի հանել եւ հսկողության տակ պահել հետագա զարգացումները՝ նկատի ունենալով այն փաստը, որ ընդդիմությունն այսօր արդեն պառակտված է:

Այսպես՝ «Հանրապետական» կուսակցության ղեկավար Դավիթ Ուսուպաշվիլին վճռել է ընտրություններին մասնակցել մյուս կուսակցություններից ու դաշինքներից անկախ՝ նշելով, որ միայնակ գնալով ընտրության՝ հանրապետականներն առավել մեծ հաջողությունների կհասնեն:

Որոշ վերլուծաբաններ կարծիք են հայտնում, որ այս ընտրապայքարում իշխանության համար մրցակից կլինեն «Հանրապետական» եւ «Նոր իրավունքներ» կուսակցությունները:

Ինչ վերաբերում է վերջինին, ապա «Նոր իրավունքներ» կուսակցությունը խորհրդարանական ընտրապայքարում ագրեսիվ ռազմավարություն է որդեգրել՝ չկրկնելով անցյալի սխալները: «Այս իշխանությունների հետ այլեւս ոչ մի երկխոսություն ու բանակցություններ չեն լինելու»,-հայտարարել է կուսակցության առաջնորդներից Պիկրիյա Չիխրաձեն:

Թեեւ ընտրարշավի մեկնարկը դեռ չի տրվել, սակայն ակնհայտ է, որ այս ընտրություններից հետո էլ Վրաստանը բախումներից զերծ չի մնալու, ինչն ամեն անգամ բացասական ազդեցություն է ունենում ոչ միայն Վրաստանի ներքին կյանքում, այլեւ նրա սահմաններից դուրս:

Բուխարեստում տեղի ունեցած ՆԱՏՕ-ի գագաթաժողովում Վրաստանին չհաջողվեց ՆԱՏՕ-ի անդամակցության թեկնածուի կարգավիճակ ստանալ. այս հարցը կքննարկվի դեկտեմբերին: Այնուամենայնիվ, վրացական իշխանությունները բուռն կերպով կշարունակեն ՆԱՏՕ-ին անդամակցելու փորձերը՝ ակնկալելով վերջինիս աշակցությունը, ինչն էլ չէ, նաեւ գալիք խորհրդարանական ընտրություններում:

Մինչ այդ Ռուսաստանը շտապում է Աբխազիայում ավելացնել իր զորքերը, ինչը մեծ դժգոհություններ է առաջացրել ինչպես ընտրությունների նախաշեմին կանգնած Վրաստանում, այնպես էլ վերջինի հովանավոր ԱՄՆ-ում:

Վրաց-աբխազական կոնֆլիկտի գոտում ռուսական խաղաղապահների թվի ավելացումից անհանգստացած՝ նախագահի եւ այլ բարձրաստիճան պաշտոնյաների մակարդակով Վաշինգտոնից պարբերաբար հնչում են հայտարարություններ, թե ռուսական զորքի ավելացումը տարածաշրջանում դրության ապակայունացման կրեթի, եւ անհրաժեշտ է, որ Ռուսաստանը վերանայի իր ծրագրերը:

ՆԱՏՕ-ից էլ հիշեցնում են, որ Ռուսաստանի այս քայլերը սպառնում են Վրաստանի տարածքային ամբողջականությանը, իսկ այս հարցում ՆԱՏՕ-ի անդամ երկրներն աջակից կլինեն Վրաստանին:

Լեւոն Բարսեղյան

# ԿՐԹԱԿԱՆ ՆՈՐ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Հանրակրթության ոլորտի բարեփոխումների ներկա փուլի հիմնական խնդիրը կրթության որակի ապահովումն է: Բարեփոխումների առաջնությունն անխառնելի է մեզ համար: Կրթության համակարգին, որի իրականացումը սկսվեց 2006 թվականին, իսկ ավարտը նախատեսվում է 2012 թվականին: Այս գործընթացի շրջանակներում 2009-2010 ուսումնական տարվանից նախատեսվում է եռամյա ավագ դպրոցի ներդրումը:

Այս ծրագիրն ուղղված է հանրակրթության երրորդ աստիճանում՝ ավագ դպրոցում, կրթության որակի եւ արդյունավետության բարձրացմանն ու արդիականացմանը:

«Ծրագրի ընդունումը կարելու է, քանի որ ավագ դպրոցը հանդիսանում է նախամասնագիտական կրթություն ապահովող հիմնական օղակը, որի գործունեությունից մեծապես կախված է սովորողների մասնագիտական ճիշտ կողմնորոշումը եւ հետագա ուսումնառության հաջողությունը»,-ասում է ԿԳՆ հանրակրթության վարչության պետ Նարինե Հովհաննիսյանը:

Ավագ դպրոցը հանդիսանում է միջնակարգ կրթության երրորդ աստիճանը, որն անվճար է եւ ոչ պարտադիր:

Ավագյանների ընտանիքում արդեն որոշել են, որ տասնչորսամյա Հենրիկը ավագ դպրոցի առաջին սաներից է լինելու, իսկ տան ավագը՝ Արփիեն, դպրոցը կավարտի մյուս տարի եւ կփորձի ընդունվել բուհ: Արփիեն արդեն հաճախում է լրացուցիչ պարապմունքների, իսկ Հենրիկը կընտրի հոսքային դասարան եւ առանց լրացուցիչ ծախսերի կուսումնասիրի ապագա մասնագիտության համար անհրաժեշտ առարկաները:

Ավագյանների մայրը ծրագրի հետ մեծ հույսեր է կապում. «Տղաս մաքեմատիկա առարկան է նախընտրում, եւ կարծում եմ, որ բնագիտական հոսք ընտրելով եւ վերապատրաստված մասնագետների հետ աշխատելով՝ կլրացնի իր գիտելիքների պաշարը եւ առանց խոչընդոտների կընդունվի բուհ»:

Ներկայումս հանրապետությունում գործում է 1329 պետական միջնակարգ ընդհանուր դպրոց, որոնցից 10-ը՝ տարրական, 151-ը՝ հիմնական եւ 1168-ը՝ միջնակարգ: Գործում են նաեւ 34 վարժարան եւ 14 արհեստագործական դպրոցներ: Հանրակրթական հաստատություններում սովորում են 465.403 շաշակերտ, որոնցից 102.977-ը կամ սովորողների ընդհանուր թվի մոտ 22.13%-ը՝ ավագ դպրոցում:

Ավագ դպրոցի հիմնական առաքելությունը պետք է լինի առանցքային ուղղվածությունն՝ ըստ ընդունակությունների եւ կարողությունների:

Այն շրջանավարտները, ովքեր չեն ձգտում բարձրագույն կամ միջին մասնագիտական կրթություն ստանալ կամ չեն ունեցել բավարար առաջադիմություն հիմնական դպրոցում, նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն ստանալու հնարավորություն կունենան՝ միաժամանակ չկորցնելով միջնակարգ կրթություն ստանալու կամ միջին

մասնագիտական ուսումնական հաստատությունում ուսումը շարունակելու հնարավորությունը:

Առանձին գործող ավագ դպրոցներում նախատեսվում է իրականացնել տարբերակված հոսքային կրթություն. հիմնական՝ բնագիտական, հումանիտար եւ արհեստագործական, եւ լրացուցիչ՝ արվեստի, մարզական, ռազմական:

Համաձայն Միջնակարգ կրթության պետական չափորոշիչի՝ ավագ դպրոցի կրթական ծրագիրը ներառելու է 3468 դասաժամ ուսումնական ծանրաբեռնվածություն, որից 2142 ժամը՝ հոսքային ուսուցման դեպքում, նախատեսված է համընդհանուր պարտադիր, 1122-ը՝ հոսքային, եւ 204-ը՝ ընտրովի առարկաների համար: Դասաժամերի բաշխման հարաբերակցությունը դասարանից դասարան չի փոխվելու, եւ միայն ավարտական դասարանի երկրորդ կիսամյակում նախատեսվում է պետական եւ դպրոցական բաղադրիչներով նախատեսված դասաժամերը տրամադրել պետական քննական առարկաների ուսումնական նյութի կրկնությանը, անհատական եւ խմբային խորհրդատվություններին եւ քննությունների անցկացմանը:

Արհեստագործական ավագ դպրոցների շրջանավարտները, բացի միջնակարգ կրթության ավարտական փաստաթղթից, կստանան նաեւ համապատասխան որակավորում: Բացի արհեստագործական ավագ դպրոցի ծրագրի իրականացումից, նախատեսվում է նաեւ մեկամյա արհեստագործական ուսուցման ծրագիր՝ առանց միջնակարգ կրթության ավարտական փաստաթուղթ ստանալու իրավունքի, քանի որ այն չի ներառի հանրակրթական առարկայացանկը: Այս ծրագիրն ավարտողները կստանան միայն արհեստագործական նվազագույն որակավորում, ինչը նրանց հնարավորություն կտա զբաղվել աշխատանքային գործունեությամբ:

Այն բնակավայրերում, որտեղ գործում է մեկ միջնակարգ դպրոց, այն կշարունակի գործել նույն կարգով՝ իրականացնելով ավագ դպրոցի ընդհանուր հոսքի կրթական ծրագիր: Ավագ դպրոցի ֆինանսավորումն իրականացվելու է ներկայումս գործող սկզբունքներով. դպրոցի հատկացումը կատարվելու է ամբողջական գումարով եւ հաշվարկվելու է աշակերտների թվի վրա հիմնված բանաձևով:

Նորաստեղծ ավագ դպրոցների հիմնադրման ժամանակաշրջանում ՀՀ պետական բյուջեից կկատարվեն ներդրումային ծախսեր՝ հիմնանորոգման, գույք եւ սարքավորում ձեռք բերելու նպատակով: Ավագ դպրոցներում կրթության բարձր որակ ապահովելու նպատակով նախատեսվում է դրանցում ստեղծել ժամանակակից ռեսուրս-կենտրոններ՝ գրադարաններ, որոնք համալրված կլինեն էլեկտրոնային եւ տպագրական ժամանակակից ուսումնական նյութերով: Դպրոցի ֆինանսավորումն իրականացվելու է կրթության եւ գիտության եւ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարությունների կողմից:

Սեւակ Արամյան

# «ՄԵՆԷ ԶՈՒԻ ԲԱՐԴՈՒՅԹ ԶՈՒՆԵՆԷ»

**-Ձեր կարծիքով՝ եղեռնը ի՞նչ բարդություն է առաջացրել մեր հասարակության զբաղմունքում: Դրանք ի՞նչ ազդեցություն են ունեցել մարդկանց վարքի վրա, եւ ինչպե՞ս հաղթահարել դրանք:**

-Յուրաքանչյուր հասարակություն՝ ապրելով նման ողբերգություն, ունենում է



**ԶՈՒՐԱՆԴ ԱՍՏՐՅԱՆ**  
հոգեբանական գիտությունների թեկնածու

բավական լուրջ հոգեբանական հիմնախնդիրներ: Նույնիսկ 93 տարվա հեռավորությունից մեզ համար դժվար չէ հիմնավորել հոգեբանական այն բոլոր բացասական ազդեցությունները, որոնք առկա են եղեռնի հետեւանքով: Եթե մի ամբողջ ազգանցում է մնան ողբերգության միջով, ապա սերունդների մոտ առկա են հուզականությանը հագեցած մտքեր, մտապատկերների մի ողջ համակարգ, որը, լինելով ենթագիտակցական, չի կարող ազդեցություն չունենալ վարքի վրա: Այսօր հայ մարդու գիտակցության մեջ իր ազգի անցած պատմական ուղին բաժանվում է երկու մասի՝ մինչ եղեռնը եւ դրանից հետո: Հայ մարդուն բնորոշ է մի եական հատկություն: Դա յուրահատուկ պաշտամունքն է անցյալի նկատմամբ: Իմ կարծիքով՝ չէք գտնի մի հայի, ով ամառի իր նախնիների անցյալից, գիտակցված կեղծի իր նախնիների պատմությունը: Այսօրվա հայ մարդը շատ դրական արժեքների հետ մեկտեղ, ժառանգել է իր ընտանիքի անցյալի, իր նախնիների նկատմամբ պաշտամունքի զգացողությունը:

Հոգեբանության մեջ անհատի համար վշտի հաղթահարման տարբեր ժամանակներ են նշվում: Իհարկե, տարբեր մշակույթ, կրոն ունեցող ժողովուրդները այդ ժամանակահատվածը սահմանել են մոտավորապես մեկ տարի: Հոգեբանական առումով դա բավական հիմնավորված ժամանակահատված է: Այդ ժամանակահատվածում վշտի հաղթահարման գործընթացը հաջող է ընթանում, եթե զուգահեռաբար վերացվում են հետեւանքները: Դրա համար պետք է հասկանալ, ընդունել տեղի ունեցածը: Բա-

րեբախտաբար, թե ցավոք սրտի, հայ մարդը հասկանում է իր հետ տեղի ունեցածը, սակայն չի կարող հաշտվել, քանի որ մյուս կողմը պատժված չէ: Իսկ ինչպե՞ս հաղթահարել: Ես այս հարցին կպատասխանեմ այլ շեշտադրությամբ, ինչպե՞ս չի կարելի հաղթահարել այն... Երբեք չի կարելի մի ամբողջ ազգի պարտադրել դադարել այդ մասին բարձրաձայն խոսելուց, քանի որ վշտի պատճառով առաջացած բոլոր զգացումները պետք է ինչ-որ ձևով արտահայտվեն: Հուզական տառապանքը, ցավը մշտական են միայն այն դեպքում, երբ մեր ամբողջ էներգիան ծախսվում է այդ զգացումները ճնշելու վրա: Իրականությունից փախչելը հոգեբանության մեջ համարվում է զգացմունքների հաղթահարման ամենադեստրուկտիվ միջոցը: Հայ մարդը բարդություններ ձեռք կբերեր, եթե նրան կտրեին իր անցյալի հետ ունեցած կապից:

**-Մեր հասարակության մոտ կա՞րող զոհի բարդույթ կոչվածը, եւ ինչպե՞ս հաղթահարել այն:**

-Իմ կարծիքով՝ այսօր մեր հասարակության մեջ զոհի բարդույթ չկա: Ես նույնիսկ կարող եմ ասել, որ երբեք էլ չի եղել: Եթե մենք տարբեր առիթներով խոսում ենք մեր ժողովրդի հետ տեղի ունեցած ողբերգության մասին, դա դեռ զոհի բարդույթ ունենալու վկայություն չէ: Չոհի բարդույթն բնորոշ է թերաթեթեթյան զգացողություններով, որն ուղեկցվում է սեփական անձի մասին անբարենպաստ պատկերացումներով, ցածր ինքնագնահատականով եւ բացասական պատկերացումներով: Չոհի բարդույթն ունեցող ժողովուրդը հաղթանակներ ունենալ չի կարող: Արցախյան ազատագրական պայքարում տարած հաղթանակը դրա փայլուն ապացույցն է:

Մենք խոսում ենք մի ողբերգության մասին, որը կոչվում է եղեռն: Իրենց դաժանությամբ յուրահատուկ այդ դեպքերը չէին կարող իրենց ազդեցությունը չթողնել ականատեսների վրա: Նման հոգեկան հարված ապրած մարդկանց համար ախտահանիչներ են համարվում ուժեղ վախը, սարսափը, անօգնականության զգացումը եւ ժամանակ առ ժամանակ այդ իրադարձությունների վերապրումը: Այդ դեպքերի մասին ցանկացած միտք 93 տարվա հեռավորությունից անգամ հայ մարդու մեջ հարուցում է հոգեկան լարվածություն, վիշտ, սթրես: Հոգեբանական ճնշվածությունն ավելի է ուժեղանում, եթե շրջապատում առկա են իրադարձությունների վկայության խորհրդանիշները: Մեր պա-

րագայում դրանից խուսափելն անհնար է: Մարդը չի կարող ապրել, ապագա ունենալ առանց անցյալի: Հայրենիքի նկատմամբ կարող է զգացողությունը փոխանցվում է սերնդեսերունդ: Աշխարհի տարբեր վայրերում ծնված հայ մարդուն եթե հարցնում ես՝ որտեղի՞ց է, ապա նա բնագործն, ենթագիտակցորեն անմիջապես պատասխանում է, որ իր պապերը կամ մշեցի են, կամ վանեցի, եւ այդպես շարունակ: Մեր էթնոսին բնորոշ հատկանիշ է անցյալի հետ յուրահատուկ կապը, որով էլ նա տարբերվում է մյուս ազգերից: Այսօր, բարեբախտաբար, հայ մարդը կարողացել է վերաարժեւորել իր անցյալը, այդ ընթացքում ձեռք բերել վերանձնային իմաստներ, որոնք էլ օգնում են առաջ քաշել նոր նպատակներ: Ինչպես անհատի, այնպես էլ ժողովուրդների կյանքում հոգեկան բացասական ապրումները հաղթահարելու համար առանձնահատուկ կարեւորություն ունեն հաղթանակներն ու հաջողությունները:

**-Ձեր կարծիքով՝ անհատի, զոհի նկատմամբ խղճահարության գերակայությունը դայանավորված է ժամանակակից իրադարձություններով, թե՞ խղճալը եւ խղճահարությունն առաջացնելը բնավորության գիծ է:**

-Խղճահարություն բառը ես չեմ ցանկանա կիրառել եղեռնի դեպքերի նկարագրության ժամանակ: Եղեռնը ողբերգություն էր, որը պայմանավորված չէր մեր ժողովրդի թուլությամբ. պատմական անցանկալի իրադարձությունները հանկարծակի բերեցին ժողովրդին, եւ նրանք չկարողացան վերահսկել սեփական ճակատագրերը: Այն, ինչ որ եղել է եղեռնի ժամանակ, պետք է սերունդների համար դաս լինի, որպեսզի հետագայում խուսափենք նման դեպքերից: Բազմաթուղիների թագավորության անկումից հետո, երբ բյուզանդացիներին հանձնեցինք մեր երկրի «բանալիները», սա լուրջ ռազմավարական սխալ եղավ: Մենք պետք է արժեւորենք մեր պետականությունը, ակնածանք ունենանք պետական խորհրդանիշների՝ դրոշի, բանակի, զինանշանի նկատմամբ, եւ դա ուժ կտա ժողովրդին, կստիպի ազատվել խղճահարության բարդույթից: Պետք է ներկաներին խղճալ, սա մարդանհատի մոտ կարող է լուրջ հոգեբանական ճնշման պատճառ հանդիսանալ: Պետք է մարդուն աջակցել եւ խրախուսել ինքնարժեւորման համակարգի զարգացման յուրաքանչյուր փուլում:

Էդգար Ամիրխանյան

# ՏՈՆԱԿԱՆ ՕՐՆ՝ ԱՌԱՆՑ ԽՆԴԻՐՆԵՐԻ

Ապրիլի 29-ը պարավեստի միջազգային օրն է: Արդեն երկու տարի է, ինչ այն նշում են նաև ՀՀ մշակույթի նախարարությունում պարզեատրելով ոլորտի վաստակաշատ գործիչներին:

Ազգային պարավեստի զարգացման գործում ունեցած մեծ վաստակի համար, ինչպես նաև պարավեստի միջազգային օրվա առթիվ մշակույթի նախարար Յասմինկ Պողոսյանի հրամանագրով ՀՀ մշակույթի նախարարության ոսկե մեդալներով պարգևատրվեցին Հայաստանի ժողովրդական պարերի «Գեղարդ» անսամբլի զեղարվեստական ղեկավար և զխավոր բալետմայստեր Ալբերտ Կիզիրյանը, Վանաձորի «Հորովել» երգի-պարի համույթի մենապարուհի Անժելա Գրիգորյանը, Հայաստանի պարի պետական անսամբլի մենապարուհի Սրբուհի Բաբայանը, «Էլենը և երեխաները» պարի թատրոնի պարուսույց Էլեն Գրիգորյանը:

«Բերդ» պարային անսամբլի զխավոր պարուսույց, Հայաստանի ազգային պարավեստի միության նախագահ Կարեն Գեորգյանի և Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի մենապարուհի Սոնա Առուստամյանի ոսկե մեդալները, ինչպես նախարարը հավաստեց, կհանձնվեն ավելի ուշ. պարզեատրվողները չէին ներկայացել:

«Հայաստանի ազգային պարավեստի և պարագետների միությունը բոլորտում է նախարարի հրավերը, և մենք չենք մասնակցելու նախարարությունում կազմակերպված ոչ մի տեսակի միջոցառման այնքան ժամանակ, մինչև նախարարությունը չփոխի իր վերաբերմունքը: Նախարարությունը չի պատկերացնում, թե ինչպես կարելի է ճիշտ նշել տոնը. եթե մենք բոլորս հավաքվեինք մի խնդրի շուրջ, խոսեինք և մեր առկա

խնդիրները լուծելու հնարավորություն ունենայինք՝ այ դա կլիներ իսկական տոն», -ասում է Կարեն Գեորգյանը:

Այնուամենայնիվ տոնական հանդիպումը չմտալվեց խնդիրների քննարկմամբ, և շնորհավորանքներից ու շնորհակալություններից բացի եղան նաև տեղեկացումներ: Մշակույթի նախարարության դրամաշնորհների ծրագրին ակտիվորեն ու ճիշտ ժամանակին մասնակցելու դեպքում, նախարարի հավաստմամբ, չի անտեսվի ոչ մի հայտ: Նախարարը նշեց այդ նախաձեռնություններից մի քանիսի մասին. Շիրակի և Լոռու մարզերի պարի համույթների համար նոր զգեստներ են պատվիրել 13 միլիոն դրամ արժողությամբ, Գյումրիում կիրականացվի պարավեստի հանրապետական փառատոն, Հանրապետությունում կկազմակերպվեն վարպետության դասընթացներ:

«Պարավեստի կարեւորությունը՝ որպես ոչ նյութական մշակութային արժեք, մեծապես գիտակցվում է նախարարությունում և պետական մտտեցումներն ու աջակցությունը կդրսեւորվեն հորելյանների նշման շրջանակներում», -ասում է Հասմիկ Պողոսյանը:

Այս տարի լրանում է Հայաստանի պարի պետական անսամբլի 50, Թաթուլ Ալթունյանի անվան երգի-պարի պետական անսամբլի 70 և «Բարեկամություն» անսամբլի հիմնադրման 20 տարին: Երեք հորելյաններն էլ, ինչպես նախարարը հավաստեց, նշվելու են մեծ շուքով:

Հասմիկ Պողոսյանը նշեց, որ շատ կարեւոր է արվեստի միջոցով մարդկանց միավորելու գաղափարը և, որպես օրինակ, անդրադարձավ նախանցյալ տարի մայիսի 28-ին կազմակերպված շուրջպարին:

Անահիտ Դուկասյան

# ՆԱԽԻՋԵՎԱՆՆ ԻՐ ՆՈՐ ՎԱՄԱՅՆԱՊԱՏԿԵՐՈՎ

Հագարից ավելի լուսանկարներ, քարտեզներ, բացառիկ տեղեկություններ, 200-ից ավելի ուսումնասիրություններ, Նախիջևանի հայության կյանքը պատկերող 22 գիրք...

Արգամ Այվազյանի վերջերս հրատարակած «Նախիջևան. գրական էսսեներ, հետազոտման ուղեգրություններ», «Ջուղայի կործանված խաչքարերի սիմֆոնիան», «Նախիջևանի վիմագրական ժառանգությունը, հատոր Գ, Գողթն գավառ» և «Nakhijevan. Map of Monuments» աշխատությունները կամբողջացնեն Նախիջևանի մասին եղած պատկերացումները:


Նախկին «Նախիջևանը 1905-1918-19թթ. Կրակի շղթայի գոյամարտերում» գրքով հեղինակը ներկայացնում էր 1905 և 1918-19թթ. նախիջևանահայության կոտորածները, բռնագաղթերը, ինչպես նաև հերոսական պայքարի էջերը: Աշխատության մեջ հրապարակվել էին բազմաթիվ նոր, արխիվային փաստեր, ժամանակակիցների հուշագրություններ և 100-ից ավելի լուսանկարներ:

«Նախիջևան. գրական էսսեներ, հետազոտման ուղեգրություններ» աշխատությունը գրական աշխատանք է, որում առաջին անգամ Նախիջևանը ներկայանում է իր լեռնաշխարհով, բնակչությամբ, մշակույթով, նախիջևանյան կոլորիտով: 27 էսսեների հերոսները պատմական անձինք են, ովքեր իրենց պատմություններով ներկայացնում են Նախիջևանի ճարտարապետության, մշակույթի և ապրելակերպի առանձնահատկությունները: Գրողը 800 էջի մեջ խտացրել է ողջ Նախիջևանի իր համայնապատկերով, իսկ օտարալեզու ընթերցողների համար անգլերենով հրատարակված 20 էջանոց զունավոր «Nakhijevan. Map of Monuments» ներդիր-ատլասում ներառված են հանրագիտարանային և պատմական տեղեկություններ Նախիջևանի մասին:

«Ատլասում յուրաքանչյուր գավառ ներկայացված է իր համապատասխան քարտեզով, հուշարձանների և բնակավայրերի տեղագրությամբ», -պատմում է Արգամ Այվազյանը: Եռալեզու «Ջուղայի կործանված խաչքարերի սիմֆոնիան» 727 լուսանկարներով գիրքը ներկայացնում է Ջուղայի պատմական անցյալն ու մշակույթը, որը հազարավոր ավերված խաչքարերի փաստավորագրական, աղբյուրագիտական միակ հրատարակությունն է:

«Նախիջևանի վիմագրական ժառանգությունը», որն ի դեպ լույս է տեսել պետպատվերով, Գողթն գավառի 27 բնակավայրե-

րի, գրչանկարների և բացառիկ, չիրապարակված տեղեկությունների ժողովածու է: Հատորն ընդգր-



կում է Ջուղայից մեզ հասած և 1998-2002 թթ.-ին հիմնահատակ ավերված 1200 վիմագրեր, որոնցից 900-ը ներկայացվում են առաջին անգամ:

«Այսօր Նախիջևանի նկատմամբ մեր պետության վարած քաղաքականությունը, ցավոք, բավարար չէ: Վերջին 4-5 տարում Հայաստանն այդպես էլ չկարողացավ Նախիջևանի հուշարձանների ավերման փաստը ներկայացնել թե՛ ՅՈՒՆԵՍԿՕ-ի, թե՛ Եվրամիության և թե՛ ՄԱԿ-ի մակարդակով», -ասում է Արգամ Այվազյանը:

Հեղինակի աշխատասեղանին Նախիջևանի մասին պատմող դեռ յոթ անավարտ գործ կա, որոնք, հույս ունի շուտով տպագրության հանձնել:

Էդգար Ամիրխանյան

# ՆԱԲՈՎՈՎԻ ՈՐԴԻՆ ԽԱԽՏԵԼ Ե ՇՈՐ ՎԵՐՋԻՆ ԿԱՄՔԸ

Գրական աշխարհում աղմուկ է բարձրացրել Վլադիմիր Նաբոկովի որդու մտադրությունը՝ հրապարակել հոր վերջին ձեռագիրը:


«Լաուրայի բնագիրը. մահանալը ծիծաղելի է» ձեռագրի բովանդակությունը, որը շուրջ 30 տարի պահվում է շվեյցարական բանկում, հայտնի է միայն հեղինակի որդուն՝ Դմիտրի Նաբոկովին: Ինքը՝ գրողը, կտակել է ոչնչացնել ձեռագիրը:

Ձեռագիրը կազմված է 50 առանձին էջերից, ամենայն հավանականությամբ, գիրքը եւս կիրատարակվի առանձին քարտերի տեսքով, որոնց հաջորդականությունը կորոշի ընթերցողը:

«Շատերին դժվար կլինի հասկանալ, թե ինչ է կատարվում այստեղ, քանի որ ձեռագիրը պահպանվել է հատվածաբար: Գլխավոր գործող անձը խոշոր, գեղ մի մարդ է: Նա շատ խելացի է, փայլուն գիտ-

նական: Նա ավելի ու ավելի շատ է սկսում մտածել մահվան մասին: Նրա այդ հոգեվիճակը մասամբ պայմանավորված է հուսահատությամբ, ինչի պատճառը երիտասարդ կնոջ թեթևաբարո վարքն է»:

Նաբոկովի վերջին վեպի շուրջ ամենամահավանական լուրեր էին պտտվում. շատերը հավաստում էին, թե այն ոչն-



չացվել է, մյուսները պնդում էին, թե շուտով կիրատարակվի:

«Լուլիտայի» հեղինակի կնոջ՝ Վերայի մահվանից հետո նրանց որդին՝ նախկին օպերային երգիչ Դմիտրի Նաբոկովը, վեպի միակ ժառանգորդն է:

«Քարտերի վրա նա գրել է մատիտով, դա հրաշալի մի ստեղծագործություն է. ինքնատիպ արտահայտություններ, խոսքեր, նկարագրություններ...», -նշում է ձեռագրի սեփականատերը:

Պատմում են, որ ծանր հիվանդության պատճառով անկողնում գամված հեղինակը վեպից հատվածներ է ընթերցել հիվանդանոցի անձնակազմի համար: Հայտնի է, որ Նաբոկովը չի հասցրել ավարտել «Լաուրա»-ն: Հեղինակը գրել է, թե վեպը տեսել է երագուն, և գիրքն ստացվել է անդրաշխարհային կյանքի և մահվան մասին:

«Լաուրայի ծանոթը երկա-

թուղային կայարանում ասում է. «Ահա մի գիրք, որ քո մասին է, դու կկարդաս քո մահվան մասին: Դա հրաշալի մահ է»:

Կարծում ենք, որ այս տեսարանը համապատասխանում է վեպի գլխավոր մասի ավարտին. ժամանում է գնացքը, և կանանցից մեկը մեկնում է, երկրորդը, որը, հնարավոր է, ներկայացնում է ընթերցողին, մնում է միայնակ: Նա երբեք չի իմանա, թե ինչ եղավ հետո», -պատմում է Դմիտրի Նաբոկովը:

«Լաուրա»-ն և Նաբոկովի՝ ուշ ժամանակաշրջանի մյուս ստեղծագործությունները գրված են անգլերեն:

«Այս գիրքը Նաբոկովին նոր փառքի չի արժանացնի, հակառակը՝ կարող է վտանգել նրա հեղինակությունը: Ամեն դեպքում գրել է հիվանդ մի մարդ. դա Նաբոկովի այն մակարդակը չէ, որին սովոր ենք», -նշում է վեպի թարգմանիչ Սերգեյ Իլյինը:

Այնուամենայնիվ, հեղինակի՝ Սանկտ-Պետերբուրգի թանգարանում անհամբեր սպասում են հրատարակմանը: Ի վերջո, Նաբոկով դասականի հեղինակությանն այլևս ոչինչ չի կարող վնասել:

«Վերա Ալեքսեևնան նշում էր, որ Նաբոկովի ստեղծագործության հիմնական թեման անդրժիբիմյան կյանքն էր: Այսինքն՝ այն, թե ինչպես է փոխվում գիտակցությունը, ինչպես է իրականանում այդ անցումը: Նաբոկովը բացարձակապես հավատում էր նրան, որ գիտակցությունը մարդու ֆիզիկական մահվան հետ չի վերանում», -նշում է Վլադիմիր Նաբոկովի Թանգարանի տնօրեն Տատյանա Պոնոմարևան:


Նյութը ներկայացնում է «Եվրոպական ինտելեկտուալ» 74-Ն ԵԱԳԿ ԵՐԵՎԱՆԻ ՋՐԱՍԵՆՅԱԿԻ ԱՋԱԿԳՈՒՅԱՄԸ

# ՄԱՐԴՈՒ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԾԱԳՈՒՄԸ

Մարդու ծագման հարցը շատ ցավազին է եւ կապված է սկանդալների, նենգափոխումների եւ քողագերծումների հետ: Այն ձգվում է Չարլզ Դարվինի եւ նրա գործընկեր Ալֆրեդ Ուոլլեսի վեճից ի վեր: Դարվինի հետ միաժամանակ գալով բնական ընտրության միջոցով տեսակների ծագման տեսությանը՝ Ուոլլեսը հետազայում դրանից հրաժարվում է եւ դառնում դարվինիզմի մոլի հակառակորդ: Եթե Դարվինի համար ակնհայտ էր, որ «մարդը ծառերի վրա ապրող մագոտ, պոչավոր, քառաթաթ էակի սերունդն է»՝ բացառելով մարդու հատուկ կարգավիճակ ունենալու իրավունքը, ապա Ուոլլեսը գտնում էր, որ մարդն Աստծո առանձնահատուկ ստեղծագործությունն է:

Նել է 30 մլն տարի: Իսկ եվրոպական հնագիտության փայլուն գլուխներն ասում են. «Այդպիսի բան երբեք չի կարող լինել»,- եւ ոչնչացնում են փաստաթղթերի մեծ մասը: Ամերիկացի հետազոտողներ Մայքլ Քրեմոն եւ Ռիչարդ Թոմփսոնն իրենց «Մարդկության անհայտ պատմությունը» գրքում այնպիսի փաստեր են հաղորդում, որոնք արդեն անհնար է անտեսել:

Լավ, թողնենք քարե ժայրերն ու կացինները: Իսկ ի՞նչ կասեք մետաղյա գնդերի մասին, որոնք վերջին տասնամյակներին ժամանակ առ ժամանակ գտնում են Հարավային Աֆրիկայի համաքափորները: Մասնագետների կարծիքով՝ այդ մետաղագնդերի տարիքը 2 մլրդ 800 մլն է: Խոսելով



զիտնականների զգույշ լեզվով՝ այդ մետաղագնդերն այնպիսի տեսք ունեն, ասես դրանք մարդ է պատրաստել: Իսկ եթե ասենք հասկանալի լեզվով, ապա դրանք խելացի, հմուտ եւ տեխնիկապես զինված էակի ձեռքի գործն են, որն ապրել է երկրագնդի վրա 2,8 մլրդ տարի առաջ:

Իսկ դարվինիզմի կողմնակիցները չեն կարող սա ընդունել, քանի որ homo sapiens-ին հատկացնում են պատմության միայն վերջին 150 հազար տարին:

Իսկ ինչպե՞ս բացատրել այն գտածոները, որոնց մասին հիշեցրել են Քրեմոն եւ Թոմփսոնն իրենց գրքում: Դրանք են 550 մլն տարեկան կոչիկի հետքը, քարի մեջ սեղմված 340 մլն տարեկան մետաղական բաժակը, քարածխի մեջ գտնված 280 մլն տարեկան ոսկյա շղթան, ամերիկյան Իլլինոյս նահանգում գտնված 300 մլն տարեկան մարդու կմախքը:

Երբ այս մասին Քրեմոն պատմում է NBC հեռուստաալիքի եթերով, դարվինիստներն ԱՄՆ կառավարությունից պահանջում են պատժել հա-

ղորդման պրոդյուսերներին եւ հեղինակներին, ստիպել հեռուստաընկերությանը ներողություն խնդրել ամերիկյան ժողովրդից, իսկ NBC-ին էլ՝ 1 մլն դոլարով տուգանել, սակայն կառավարությունը որոշում է չխառնվել այս բանավեճին:

Եթե Մարդ բանականը երկրագնդի վրա գոյություն ունի ոչ թե 150 հազար, այլ միլիոնավոր կամ նույնիսկ միլիարդավոր տարիներ, ապա հարկավոր է ճշտումներ մտցնել արդեն կայունացած պատկերացումներում: Այդ դեպքում ստիպված պետք է լինենք համաձայնել, որ չի կարելի հնարարյան ժամանակները նույնացնել վայրենության, իսկ ժամանակակից աշխարհը՝ քաղաքակրթված լինելու հետ:

Շատ հնարավոր է լրիվ հակառակը: Այս մասին վարկած է առաջ քաշել բրիտանական բանակի գնդապետ, իսկ այնուհետեւ կորած քաղաքակրթությունների աննկուն հետազոտող Ջեյմս Չրչվարդը: 100 տարի առաջ նա հայտնել է այն տեսակետը, թե մարդն ստեղծվել է քաղաքակրթ տեղի միջոցով: Նա չի ընդունում, թե մարդն առաջացել է կենդանուց, վայրենուց: Ոչ թե վայրենիներից հետո է ստեղծվել քաղաքակրթությունը, այլ վայրենությունն է առաջացել քաղաքակրթությունից:

Երբ կործանվել է մարդկության նախահայրենիքը՝ զարգացած քաղաքակրթությունը, այն մարդիկ, ովքեր համաշխարհային աղետից հետո (երբ օվկիանոսի ջրերում անհետանում է հոյակապ քաղաքներով ծաղկուն մայրցամաքը) կենդանի են մնացել եւ հիմնավորվել անպտուղ կղզիների վրա, սկսում են նախնադարյան մարդու կյանք վարել՝ մերկ ձեռքերով քարից դանակ սարքել:

Լեզենդներում վկայություն է պահպանվել մարդկության նախահայրենիք Սու մայրցամաքի մասին: Վկայություններ կան, որ Հնդկական օվկիանոսի հատակում խորտակված մայրցամաքի հետքեր կան, որը միացրել է Աֆրիկան եւ Հարավային Ասիան: Սրա ապացույցն է այդ երկուսի ֆլորայի եւ ֆաունայի նմանությունը:

Նահրա Սկրջյան

# ԵՐԲ ԵՐԿԻՐԸ ՊՏՏՎՈՒՄ ԵՐ ԸԱԿԱՌԱԿ ՈՒՂՈՒԹՅԱՄԲ

Ամերիկացի աստղագետները պարզել են, որ մինչեւ Լուսնի ի հայտ գալը, երկրագունդը պտտվում էր ավելի արագ եւ հակառակ ուղղությամբ:

Շուրջ 4.5 միլիարդ տարի առաջ տեղի է ունեցել մի իրադարձություն, որն անձանաչելիորեն փոխել է մեր մոլորակը՝ ստեղծելով կյանքի համար նպաստավոր պայմաններ. երկրին բախվել է Մարս մոլորակի ծավալի երկնային մի մարմին, ինչի հետեւանքով տիեզերքում կուտակված ապարներից ծնվել է Լուսինը:

Միացյալ Նահանգների Հարավարեւմտյան հետազոտական ինստիտուտի պրոֆեսոր Ռոբին Քենափը համակարգչի միջոցով մոդելավորել է այդ հրեշավոր բախումը եւ Լուսնի ձեւավորման գործընթացը: Պարզվում է՝ որպեսզի Լուսինը դառնար այնպիսին, ինչպիսին այսօր է, եւ զբաղեցներ իր այժմյան տեղը, անհրաժեշտ էր, որ երկրագունդը դանդաղեցներ պտույտների արագությունը եւ փոխեր դրանց ուղղությունը:

«Մեր մշակած մաթեմատիկական մոդելը վկայում է, որ երկրի վրա լուսային օրը շարունակվում էր ընդամենը 4 ժամ, իսկ արեւը ծագում էր արեւմուտքից», - նշում է պրոֆեսոր Ռոբին Քենափը:

Աստղագետները չեն բացառում առաջիկայում տիեզերական նոր բախման հավանականությունը: Գիտնականների հաշվարկներով՝ 2029թ. երկրից վտանգավոր հեռավորության վրա (37 հազար կմ) մի քանի հարյուր մետր տրամագծով հսկայական աստղակերպ կանցնի: 2035թ. այն կարող է վերադառնալ եւ բախվել մեր մոլորակին, ինչը լուրջ հետեւանքներ կարող է ունենալ:

«Վտանգավոր են համարվում 100 մետրից մեծ տրամագիծ ունեցող օբյեկտները: Չափերով Տունգուսյան երկնաքարի (1908թ. հունիսի 30-ին Արեւելյան Սիբիրի Պոդկամեննայա Տունգուսկա գետի ավազանում տեղի է ունեցել մի երեւույթ, որ հայտնի է Տունգուսյան երկնաքար անվամբ: Բնակիչներն Արեւելյան Սիբիրի տարածքի վրայով թռչող հրե մի գունդ են նկա-

տել: Շուտով պայթյուն է տեղի ունեցել, որը հավասար է եղել 40 մեգատոնն կշռով ջրածնային ռումբի պայթյունի: Մի քանի վայրկյան անց Իրկուտսկի աստղադիտարանի ինքնագրիչները երկրագնդի մագնիսական դաշտի ակնհայտ են գրանցում, որն ավարտվում է հինգ ժամ անց: Հարվածի ալիքը մեծ ավերածություններ է առաջացրել, որի հետեւանքները նկատելի են նաեւ այսօր. վերանում է 500 քառակուսի կիլոմետր մակերեսով անտառը) հետ համեմատելի երկնային այդ մարմինները երկրագնդի հետ բախման ժամանակ տարածաշրջանային մասշտաբի աղետի կարող են հանգեցնել: Ավելի քան մեկ կիլոմետր տրամագծով օբյեկտի հետ բախումը մայրցամաքային աղետի պատճառ կարող է դառնալ, ինչը կլիմայական լուրջ փոփոխությունների կհանգեցնի: Եթե աստղակերպ ընկնի օվկիանոսում՝ մեծ ալիք բարձրացնելով, ապա աղետը զլրբալ կարող է լինել», - հայտարարել է ՌԳԱ Գլխավոր աստղադիտարանի մամուլի քարտուղար Սերգեյ Սմիրնովը:

Մինչ այդ՝ շարունակվում է Լուսնի ու երկրի փոխազդեցությունը: Օդազնացության եւ տիեզերագնացության ամերիկյան գործակալության՝ ՆԱՍԱ-ի պատվերով իրականացված ուսումնասիրության շրջանակներում ամերիկացի գիտնականները պարզել են, որ յուրաքանչյուր ամիս Լուսինը «խարազանվում է» երկրի «մագ-

նիսական պոչի» կողմից: «Երկրի մագնիսական պոչը ձգվում է մինչեւ Լուսնի ուղեծիրը, եւ ամիսը մեկ անգամ Լուսինը հատում է այն: Ամենայն հավանականությամբ այսպես են առաջանում լուսնային



«Վոշու փոթորիկները» եւ էլեկտրաստատիկ լիցքավորումները», - նշում է Մերիլենդի համալսարանի աստղագետ Թիմ Սթաբը:

Երկրի «մագնիսական պոչը» մագնիսական դաշտի ձգվածությունն է: Մեր մոլորակը պարուրված է մագնիսական պարկով, որի աղբյուրը երկրագնդի միջուկն է: Միաժամանակ ձգվելով արեգակնային քամու ազդեցությանը՝ մագնիսական պարկը վերածվում է քամու հակառակ ուղղությամբ ձգվող մագնիսական «պոչի»:

Եթե երկնքում լիալուսին է, ապա այն երկրագնդի մագնիսական պոչի դաշտում է: Երկրի արբանյակը նրա մագնիսական պոչը հատում է լիալուսնի վերածվելուց երեք օր առաջ, իսկ ողջ գործընթացը տեւում է վեց օր: Այս վեց օրերի ընթացքում էլ հենց տարօրինակ երեւույթներ են նկատվում:

Նյութը ներկայացնում է «Եվրոպական ինտեգրացիա» 74-ն ԵԱԳԿ երեւանյան գրասենյակի աշակցությանը

www.amedia.am  
Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Արմեդիա» ՏԿԳ ՍՊԸ:  
Գրանցման վկայական՝ N 03U073426, տրված՝ 20.09.2006:  
Հասցեն՝ 0070 Երեւան, Վարդանանց 28/2-34:  
Կայք՝ www.amedia.am, էլ-փոստ՝ info@amedia.am:  
Թերթի գլխավոր խմբագիր՝ Սոնա Մարտիրոսյան:  
Փոխտնօրեն եւ զովագրի պատասխանատու՝ Վերոնիկա Հակոբյան: Հեռ. (+374 10) 588 911:  
Թողարկման պատասխանատու՝ Հասմիկ Հովհաննիսյան:  
Սրբագրիչ՝ Լեւոն Խաչատրյան:  
Տպագրանակը՝ 1500:  
Գինը՝ 100 դրամ:  
"Armedia" Information, Analytical Agency  
Weekly "Armedia Tpagir"  
Տպագրվում է՝ «Նշանակ» ՍՊԸ  
Հասցե՝ ք. Երեւան, Սարյան 38  
Հեռ. 518196